

87

Ի. ԲՈՒԽԱՐԻՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ
ՅԵՎ ՆՐԱ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ԿՈՒՍՅՐԱՏ


ՅԵՐԵՎԱՆ—1933

Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ 30 JUL 2010

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ
Յ Ե Վ
ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1933



03 JUL 08
03 JUL 2013

9159

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ *)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՅԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Պրոլետարիատի հեղափոխութիւնը մեր յերկրում թեւակոխել է
իր նոր փուլը — տեխնիկական հեղաշրջման փուլը: Դրանով,
եյապես, ընդգծվում է նոր փուլի վողջ անսահման խորութիւնը. 1917
թվի հոկտեմբերին ջախջախիկ բուրժուազիայի պետական ապարատը
և կազմակերպիկ բանվորների դիկտատորական իշխանութիւնը, վո-
րոնց աջակցում էր գյուղացիութիւնը, այնուհետև արագորեն դարգա-
նում էր նախկինում տիրող դասակարգերի տնտեսական եքսպրոպրիա-
ցիայի պրոցեսը՝ ռազմա-կոմունիստական տնտեսութիւն կազմակերպ-
ման հետ միասին. նոր տնտեսական քաղաքականութիւնը սկիզբ դրեց
1921 թվից «վերականգնման ժամանակաշրջանին», վորն ըստ ընդհանուր
յեկամտի ցուցանիշների բարձրացրեց մեր տնտեսութիւնը նախապա-
տերազմյան աստիճանին, սակայն արդեն՝ ընդհանուր-տնտեսական շրջա-
նի ներսում ավելի աճած սոցիալիստական սեկտորի դոյությամբ. նեպի
ժաւարված հակասութիւնները, սկսված վերականգնման պրոցեսում,
բերին հասցրին մի նոր շրջանի, վորն աչքի ընկավ կուլակութիւն վերաց-
մամբ, խորհտնտեսութիւնների ու կոլտնտեսութիւնների հակայական
աճումով և անսովոր կարգի արագ ու ինտենսիվ արդյունաբերական
շինարարությամբ: Այդ «մեծ աշխատանքների եպոխան» պահանջեց
հասարակութիւն ամբողջ տեխնիկական հիմքի արմատական վե-
րակառուցում. այսպես կոչված «հիմնական կապիտալի» կամ «սոցիա-
լիստական կուտակման» պրոբլեմը դարձավ վոչ միայն վորպես վորոշ
քանակական մեծութիւնների պրոբլեմ, այլև վորպես վորակական
սոցիալ-տնտեսական տեղաշարժերի ու վորակական տեխնիկա-
կան ձեւավորման պրոբլեմ: Պրոլետարիատի դասակարգային պայ-

*) Զեկուցում՝ դերեկտորների ոգնականների, հարվածային-
ների, ՃՏՍ բյուրոների նախագահների, միավորումների, գիտա-
կան-հետազոտական ինստիտուտների և բուհերի աշխատա-
վորների ժողովում 1931 թ. ոգոստոսի 6-ին:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԲՈՒԹՅԱՆ
ԲՈՒԹՅԱՆ

3328-89

քարը, սոցիալիզմի կառուցումը պահանջում էլին, վորպեսզի դրանք փոխադրվեն և՛ սպեցիֆիկ տեխնիկական լեզվի: Հեղափոխությունն իջավ մինչև հասարակության նյութական-տեխնիկական կմախքը և դրանով իսկ բարձրացավ իր զարգացման գագաթնակետին: Կուսակցության և նրա կենտրոնական կոմիտեյի ղեկավարությամբ,— վորն ուժեղ ձեռքով կիրառում է իր գլխավոր գիծը բոլոր թեքումների դեմ մղվող պայքարում,— բանվոր դասակարգն այժմ լուծում է ամբողջ յերկրի տեխնիկական վերասարքավորման վիթխարի խնդիրը:— մենք ապրում ենք մեծ տեխնիկական հեղափոխության ժամանակաշրջան: Վերջինս մեր առջև դնում է նոր խնդիրներ, վոր ԽՍՀՄ բանվոր դասակարգը լուծում է նույնպիսի քաջությամբ, հերոսությամբ ու յեռանդով, ինչպես նա թշնամիների վրա յեր գնում բաց զինված կռվում:

1. ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ԱՐԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

«Հասնել ու անցնել կապիտալիստական յերկրներից», այդ նշանակում է հասնել ու անցնել նրանցից տեխնիկական զարգացման բնագավառում: Ավելին: Նրանց չի կարելի վնչ հասնել, վնչ անցնել, յեթե մենք չհաղթենք նրանց հենց այստեղ—տնտեսական կյանքի նյութական միջուկում, նրա տեխնիկական հիմքում: Այդ պատճառով մեզ ամենից առաջ անհրաժեշտ է իմանալ, թե տեխնիկայի բնագավառում ինչ է կատարվում կապիտալիզմի յերկրներում, վորոնք են այստեղ տեխնիկական զարգացման հիմնական գծերը, «դեպի ուր է գնում» կապիտալիզմի տեխնիկան՝ զուգորդված արտադրության այդ յեղանակի բոլոր կողմերի և այն ցնցումների հետ, վոր ստղծում է կապիտալիզմը: Կապիտալիստական եկոնոմիկայի ժամանակակից դրությունը բնորոշվում է ամենախոր հակասություններով կապիտալիզմի արտադրական ուժերի (և նրանց տեխնիկական հիմքի) զարգացման ու արտադրական հարաբերությունների միջև, տեխնիկական-արտադրական կարողությունների ու առկա արտադրության միջև, «տեխնիկայի և կոմերցիայի» միջև, գիտական-տեխնիկական հնարավորությունների ու կապիտալիստական «յեկամարբերության» (рентабельности) միջև: Յեթե վերցնենք առաջժամիայն գործի տեխնիկական կողմը, այդ դեպքում տեխնիկական զարգացման հիմնական տենդենցները կարելի յե, մոտավորապես, վերածել հետևյալ կետերին.

1. Ելեկտրիֆիկացիայի հսկայական աճումը (անցում շոգեմեքենայից ելեկտրոմոտորի, անցում փոքր կայաններից վիթխարի ելեկտրոցենտրալների, վորպես հետևանք բարձր լարվածության հոսանքների տեխնիկայի առաջադիմության, ողակավորում):

2. Ներքին այրման շարժիչները հսկայական աճումը (այստեղ ամենից առաջ հարկավոր է մատնանշել դիզելմոտորը և այն հեղափոխությունը, վոր նա առաջ է բերում գյուղատնտեսության մեջ, տրանսպորտում և ավիոշինարարության գործում.— ավտոմոբիլ, մոտոցիկլ, աերոպլան, տրակտոր, տանկ):

3. Գյուղատնտեսության մեքենայացումը (տրակտոր, բարդ մեքենաներ, կոմբայն):

4. Նոր մետաղներ և համաձուլվածքներ (գերկարժր պողպատներ, թեթև մետաղներ և համաձուլվածքներ):

5. Արդյունաբերության և գյուղատնտեսության քիմիացումը (մի շարք կարևորագույն արտադրանքների սինթետիկ ստացումը, քիմիայի թափանցումը մետաղագործության մեջ, ածուխի քիմիան, արհեստական թելիկ (волокно), պարարտանյութերի արդյունաբերություն, գազիֆիկացիա և այլն):

6. Արտադրության բազմակողմանի մեքենայացումը և ավտոմատիզացիան (մասնագիտացված զազգյահներ, նրանց կոորդինացիան, անընդհատ հոսանք, ներգործարանային տրանսպորտ, կենտրոնական շարժիչ և առանձին մոտորներ զազգյահներին կից առանց տրանսմիսիաների):

7. Տրանսպորտի ելեկտրիֆիկացիան:

8. Ավտոմոբիլային տրանսպորտի և ավտոշինարարության բացառիկ զարգացումը:

9. Աերոշինարարություն:

10. Հեռախոսաշինարարություն, ռադիոշինարարություն, կինոյի բացառիկ զարգացումը, տելեվիզիա (մեծ հեռավորության վրա տեսնելը):

Տեխնիկական այդ խոշորագույն տեղաշարժերը, վորոնք կանգնած են տեխնիկական հեղաշրջման սահմանագծում, տեղի յեն ունենում ամենատարբեր տեխնիկական ուղղություններով կատարվող փոփոխություններին զուգընթաց. աճում է մեքենաների և նրանց ագրեգատների հզորությունը. չափազանց արագանում են շարժման բոլոր պրոցեսները (որինակ՝ պտտման արագությունները և այլն). արագանում են քիմիական ռեակցիաները (կատալիզ). բարձրանում են ոգտակար գործողության գործաիկցները (коэффициенты полезного действия):

Ինքնին հասկանալի յե, վոր այդ խոշորագույն տեխնիկական փոփոխությունները յենթադրում են.— ա) գիտության որավուր աճող կիրառումն արտադրության պրոցեսներում, բ) փոփոխությունները բանվորական ուժերի վորակավորման մեջ և կապիտալիստների կողմից բանվոր դասակարգի շահագործման կոնկրետ ձևերի մեջ, գ) փոփոխություններն աշխատանքի արտադրության և ձեռնարկության ղեկավարության կազմակերպման մեջ:

Գիտության աճող կիրառական նյութական նախադրյալն է՝ հզոր գործարանային լաբորատորիաների, հետազոտական ինստիտուտների, գիտական և գիտական-տեխնիկական ասոցիացիաների կազմակերպումը. բանվորական ուժերի վորակավորման մեջ կատարվող փոփոխություններն իր արտահայտությունն են գտնում այնպիսի բանվորական ուժերի աճման մեջ, վորոնք ընդունակ են դարգացնել ավելի ինտենսիվ աշխատանք (վերահսկողություն և ուշադրություն կենտրոնացում—լարում), ըստ վորում հին մասնագիտությունները մեռնում են ավտոմատիզացիային զուգընթաց. փոփոխություններն աշխատանքի արտադրության և ձեռնարկության ղեկավարության կազմակերպման մեջ իրադրծվում են շնորհիվ գերմասնակական արտադրության աճման, շնորհիվ արտադրության ստանդարտացման, նորմալիզացիայի ու տիպիզացիայի և նրա, այսպես կոչված, «գիտական ղեկավարման» (Թեյլոր, Գանտ և ուրիշները): Դրան պետք է ավելացնել նույնպես և «ձեռքից—բերան» վաճառքը, այսինքն՝ արտադրության կազմակերպումն ուղղակի գնորդի համար, առանց «ապրանքակուտակման» և առանց միջանկյալ առևտրական ինստանցիաների (յուրահատուկ ամերիկյան «մեթոդ»):

Այդպիսով, ստացվում է հսկայական հեղաշրջում բովանդակ արտադրության ու, հետևապես, ամբողջ կյանքի ու թմրիկայում. այդ կյանքի զարկերակն սկսում է խփել շատ ավելի արագ և յեռանդալին, ըստ վորում հիմնական զարկերը գալիս են տեխնիկական փոփոխությունների վորոտից, փոփոխություններ, վորոնք պայթեցնում են բոլոր անշարժ և կոնսերվատիվ հիմքերը: Հին նյութերը փոխարինվում են նորերով (թեթև մետաղներ, չժանգոտող պողպատ, մնացուկներ, սուրողատներ վորպես հիմնական արտադրանքներ, կերպելի զանգվածներ, ցելլուլոզ ու նրա բազմապիսի նոր կիրառումները և այլն). հին մեքենաներն իրենց տեղը գիշում են շատ ավելի հզորություն ունեցող մեքենաներին և հսկայական արտադրողականություն ունեցող նորագույն կառուցվածքի ավտոմատ-մեքենաներին. — Կլիվլանդի տպագրական մեքենան մի ժամում արտադրում է 400,000 բրոշյուր յուրաքանչյուրը 16 յերեսից. Նուհալի ավտոմատ զազգյահն այնպես է կառուցված, վոր մեկ բանվորն աշխատում է 100—110 այդպիսի զազգյահների վրա, ելեկտրական ճրագների համար գնդապակիներ արտադրող մեքենայի վրա բանվորը մի ժամում պատրաստում է 1,700 ճրագ, ձեռքով պատրաստվող 50—60 հատի հանդեպ պատերազմի ժամանակվա ինքնաթիռը զարգացնում էր 120—150 կիլոմետր մի ժամում, այժմ նրա ռեկորդային արագությունն է 580 կիլոմետր. շոգեկառքի կցովի կշիռը (сцепной вес) 20 տարի սրանից առաջ հասնում էր 70—80 տոննի, իսկ այժմ—300—450 տոննի, ըստ

վորում մի գնացքի կշիռը կարող է հասնել 10,000 տոննի. մետաղ կտրելու արագությունը 20 տարի առաջ կազմում էր 15—30 մետր մի րոպեյում, իսկ այժմ—120—180 մետր. շրջատաշման արագությունն ավելացել է 10 անգամ և այլն. հին տեխնոլոգիական պրոցեսն էր մեռնում են և առաջին անգամ ծնվում են արտասովորները: Սրանք են բազմաթիվ քիմիական սինթեզները. — բարձր ճնշումների քիմիա, ֆիզիկայի թափանցումն արտադրական պրոցեսների մեջ, ելեկտրական և ավտոգեն զոդում, մետաղների ջերմային մշակումը և հարյուրավոր այլ պրոցեսներ. արտադրության կազմակերպման հին մեթոդներն անհետանում են և նրանց փոխարինում է հոսանքային մեթոդն ավտոմատիկ զազգյահով, ամբողջ պրոցեսի ավտոմատիզմով, իր բաժանումներով մի շարք աստիճանների, վորոնք գալիս են մեկը մյուսի հետևից, ինչպես կինո-ժապավենի վրա, կոնվեյերային սիստեմով և ռացիոնալ ելեկտրիֆիկացված ներգործարանային տրանսպորտով. աշխատանքի կազմակերպման հին մեթոդները դուրս են մղվում հոգետեխնիկայի կիրառմամբ և լաբորատոր յեղանակով մշակված, կշռադատված ու գիտականորեն մտածված՝ բանվոր դասակարգի շահագործման մեթոդներով, վորոնց պայմաններում աշխատանքային ուրի հնարավոր կրճատմանը և աշխատավարձի բարձրացմանը չափազանց գերազանցում է աշխատանքի ծայր աստիճան ինտենսիֆիկացիան, նրա արտասովոր խտացումը և շահագործման նորմայի խիստ բարձրացումը:

Կապիտալիստական ռացիոնալացման դարաշրջանը, — վորը կարող է հասկանալի դառնալ իր ամբողջությամբ՝ միայն պրոցեսի բոլոր կողմերի վերլուծման ղեպքում, — հենվում է, վերջին հաշվով, արտադրության տեխնիկական կողմում տեղի ունեցող փոփոխությունների վրա, արտադրության նյութական փոփոխությունների վրա:

Սակայն այդ դարաշրջանը ծավալել է նաև իր ազդակող հակասությունները: Դրանք իրենց առավել ցայտուն արտահայտությունն են գտել արդի ճգնաժամում — ամենասուր, ամենախոր և կապիտալիզմի համար ամենավտանգավոր ճգնաժամում բոլոր այն ճգնաժամներից, վորոնք տեղի յեն ունեցել սկսած 1825 թվից, յերբ կապիտալիստական ճգնաժամերն ընդհանրապես առաջին անգամ եյին հանդես գալիս պատմական թատերաբեմում: Արտադրողական ուժերի աճումը բաղխվեց կապիտալիզմի արտադրական հարաբերությունների անձկության հետ, ըստ վորում այդ կոնֆլիկտն այնպես ազդու դուրս յեկավ այն պատճառով, վոր նա ծավալվում է համաշխարհային տնտեսության պատերազմի ժամանակվա և հետպատերազմյան ցնցումների բազայի վրա, համաշխարհային տնտեսության՝ կապիտալիստական և սոցիալիստական աշխարհների ճեղքվելու բա-

զայի վրա, ամբողջ սիստեմի, վորպես այդպիսին, ճգնաժամի բազայի վրա: Այդ ճգնաժամի յուրահատուկ գծերն արտացոլում են նաև տեխնիկայի վրա: Առաջներում ճգնաժամը վորոշ չափով առաջ եր մղում տեխնիկային. տեխնիկայես առավել առաջադեմ ձեռնարկությունները մտցնում էին լրացուցիչ բարելավումներ, ինչպես նաև էին ինքնարժեքը, դուրս էին սողում ճգնաժամից, հաղթում էին ուրիշներին, ստանում էին դիֆերենցիալ շահույթ: Հետ մնացածները պետք է լարելին իրենց ուժերը, հավասարվելին նրանց և այլն: Այժմ նկատվում է ալ տեղեկնց, այն է՝ արգելակել տեխնիկական պրոգրեսը: Դա բացատրվում է ինչպես արդի կապիտալիզմի կառուցվածքի մանուպրիստական բնույթի ծայր աստիճան զարգացմամբ, այնպես և ճգնաժամի հատուկ խորությամբ ու հաջորդ վերելքի պարզ հեռանկարի բացակայությամբ: Տեխնիկական հետադիմության այդ պրակտիկան և թեորիան առանձնապես սկսեց ծաղկել այսպես կոչված «արդյունաբերական բարգավաճման» վախճանի հետ միասին: Մանր արդյունաբերությունը, աշխատանքի պրիմիտիվ գործիքներին վերադառնալու քարոզը, հակամաշինիզմի քարոզը, հարձակումները «տեխնիկայի» դեմ, վորն իբր թե ստրկացրել է «կոմերցիան», բողոքները «մասսայական» արտադրության» դեմ (այդ բոլորը հաճախ՝ մեքենայից ստրկացված «մարդու» մասին ազնիվ ու վսեմ հոգացողություն ունենալու անվան տակ),— դրանք բնորոշ գիծն են արդի կապիտալիզմի գաղափարախոսության մեջ: Դրանով զբաղվում է և՛ ընթացիկ մամուլը, և՛ մասնագիտական ժուրնալները, և՛ աշխարհի ղեկավար մի որդան, ինչպիսին անգլիական «Նեյշըր»-ն է: Գերմանական բուրժուազիայի մոդայական փրիլսոփա Ու. Շպեյնգելը վերջերս (այս տարի) լույս է բնծայել մասնագիտական մի գիրք «Մարդը և տեխնիկան. Կյանքի փրիլսոփայության ակնարկ» բնորոշ վերնագրով, վորտեղ, ի միջի այլոց, հետևյալ ձևով է նկարագրում ժամանակակից բուրժուայի հոգեբանությունը.

«Փառաստյան մտածությունն սկսում է գերհագնալ տեխնիկայով: Տարածվում է վորոշ հոգնածություն, յուրատեսակ պացիֆիզմ բնության դեմ մղվող պայքարում: Շրջվում են դեպի ավելի պարզ, բնությանն ավելի մոտիկ ձևերը, զբաղվում են սպորտով՝ տեխնիկական փորձերի փոխարեն, ատում են մեծ քաղաքները, ուղում են դուրս պրծնել անշունչ անկենդան գործունեյության լծից, մեքենայի ստորկությունից, տեխնիկական կազմակերպության պարզ և սառը մթնոլորտից: Հատկապես առավել ուժեղ, ստեղծագործ և առանձնապես շնորհալի անձնավորությունները յերես են դարձնում գործնական ու գիտական պրոբլեմներից և շրջվում են զուտ սպեկուլյացիայի կողմը: Ուղևորվում և սպիրիտիզմը, հնդկական փրիլսոփայությունը, քրիս-

տոնեյական կամ հեթանոսական յերանգի բնագնացական փորփրումը, վորոնք արհամարհանքով էյին ընդունվում դարվինիզմի ժամանակներում, նորից հրապարակ են դուրս գալիս: Դա Հոմեր տրամադրությունն է Ոգոստոսի ժամանակվա: Կյանքի հազեցումից՝ փախչում են քաղաքակրթությունից դեպի աշխարհի ավելի պրիմիտիվ մասերը, դեպի թափառաշրջիկություն, դիմում են ինքնասպանության: Սկզբում է իծնե առաջնորդները փախուստը—հեռու մեքենայից»*):

Նման հակատեխնիզմի նյութական հիմքը, ինչպես այդ դժվար չէ հասկանալ, կապիտալիզմի ճգնաժամն է, վորը կապիտալիզմի գաղափարախոսներին ներկայանում է վորպես մաշինիզմի ճգնաժամ ընդհանրապես, անկախ մաշինիզմի պատմական ձևից: Հարկավ, արդի կապիտալիստական մաշինիզմի քննադատության մեջ կան և ճիշտ մտքեր, վոր վաղուց ի վեր զարգացրել է Մարքսը.— միակողմանի ուրբանիզմը, բանվորին մեքենայի հավելվածը դարձնելը, մասնագիտացված մարդու հոգեկան կյանքի նեղացումը և այլն: Բայց կապիտալիզմի կապիտալիստական «քննադատները» յեղ են փնտռում վոչ առաջում, այլ հետևում, տեխնիկական, տնտեսական և կուլտուր-գաղափարախոսական ռեակցիայի ուղիներում, տեխնիկայի դեմ ուղղված իրենց բողոքները պարզորոշ կապելով մատերիալիստական գիտության դեմ ուղղված բողոքների հետ: Այսպես, որինակ, պրոֆեսոր Պոպպը «Տեխնիկան վորպես կուլտուրական պրոբլեմ» վերտառությամբ իր աշխատության մեջ գրում է.

«Մեր կուլտուրայի անկման արմատները թագնված են... գիտական մատերիալիզմի մեջ, վորին նպաստել է տեխնիկայի և տնտեսության միաժամանակ զարգացումը»**)...

Հասկանալի չէ, վոր մարդկային կադրերի հարցում ևս մենք տեսնում ենք համապատասխան դիրք.— այսպես կոչված «տեխնոլոգիական գործադրկությունն» ընգրկվում է բազմաթիվ միլիոն բանվորներ և կլանում է տեխնիկական ինտելիգենցիայի մեծ խավեր. ուստի գլխավոր «հոգսն» է հանդիսանում այժմ բուհերը և բուհներն ընդունվողների թվի կրճատումը, կադրերի արտադրության սահմանափակումը, հետագիմական շարժումն այդ բնագավառում:

Այդպիսով, ժամանակակից փող կապիտալիզմը ցուցաբերում է իր հակասությունների բարձրագույն լարումը. նրա տեխնիկական

*) Ու. Շպեյնգելը. «Մարդը և տեխնիկան և այլն», Մյունխեն, 1931, էջ 81, 82 (գերմ.):

**) Ի. Պոպպ. «Տեխնիկան իբրև կուլտուրայի պրոբլեմ», Մյունխեն, 1931, էջ 9 (գերմ.):

կմախքը դեռևս շարժվում է առաջ, բայց նրա բերանն արդեն յերկաթե սանձ է դրված,— հետագա շարժումն արդեն դուրս է յելնում կապիտալիստական հարաբերությունների փոփոխության:

2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ՅԵՎ ՏՆԵՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Շատ հետաքրքիր է հետևել, թե ինչպես միևնույն դարաշրջանում հասարակության սկզբունքորեն այլ դասակարգային ձևը փոխում է ամբողջ զարգացման մաթեմատիկական նշանը, փոխարինելով միևնույնը պլուտոսով, իսկ պլուտոսերը — միևնույնով: Յեթե կապիտալիզմի պայմաններում կուտուրայի բովանդակ վռնձն սկսում է, ռեակցիայի ճնշման ներքո, յերես դարձնել տեխնիկայից, մեզնում նա իր յերեսն ուղղում է տեխնիկայի կողմը.— յեթե այնտեղ տարածվում է հակամաշինիզմը, վորպես մոդայական գաղափարախոսական հոսանք, մեզնում մաշինիզմն որովա լողունդն է. յեթե այնտեղ վայնասուն է բարձրացված գերարտադրության մասին, մեզնում մասսայական արտադրությունը (ավելի շատ մեքենաներ, ավելի շատ գործարաններ, ավելի շատ ածուխ, պողպատ, դաղգյահներ, հաց, անասուն, բամբակ, ելեկտրական եներգիա)— հրամայական խնդիր է. յեթե նրանց մոտ բողոքներ են ինդուստրացման դեմ, մեզնում դա ամբողջ տնտեսական քաղաքականությունն ընդհանրացնող նշանաբան է. յեթե նրանց մոտ պահանջն է ավելի քիչ առաջարկից, մեզնում առաջարկն է ավելի քիչ պահանջից. յեթե նրանց մոտ արտադրության կրճատում է, ապարատի թերաբեռնում է և այլն, մեզնում արտադրության առավելագույն ընդլայնումն է, պարարտի գերաբեռնումն է, հետագա շինարարության մոլեգին վաղք է. յեթե նրանց մոտ գործազրկություն է, մեզնում — աշխատավոր ձեռքերի պակասություն է. յեթե նրանց մոտ հույս է տիրում կադրերի կրճատման մասին, մեզնում մեծագույն հոգս կա նրանց թիֆն ամեն կերպ բազմացնելու. յեթե նրանց մոտ շղթաներ են դրված գիտության և տեխնիկայի հետագա առաջադիմության վրա, մկնք շահադրդոված ենք գիտության ու տեխնիկայի ամենաարագ աճման համար. յեթե «նրանք» լի յեն «հոգնածությունը», մեր յերկրի մասսաները լի յեն ստեղծագործական յեռանդով ու շինարարական վոգեկորությունը և այլն:

Արդի կապիտալիստական տնտեսությունը հղի յե նոր տեխնիկական հեղափոխությանը, վորը, սակայն, չի կարող ծավալվել, առանց պատռելու կապիտալիստական կեղևը: Կապիտալիզմը դուրս է գալիս վորպես մեծագույն արգելակը տեխնիկայի հետագա առաջնադարյան համար, թեև այդ ամեններն չի նշանակում, թե տեխնիկան ընդհանրապես արդեն չի զարգանում: Կապիտալիզմի

գաղափարախոսներն սկսում են, ինչպես մենք տեսանք, բոլոր դեմքախոսությունները բարդել չափազանց արագ տեխնիկական զարգացման վրա ընդհանրապես, արտադրակցիա կատարելով նրա սոցիալապատմական ձևից.— հենց դա կապիտալիստական փոման սիմպտոմներից մեկն է: Սակայն բնորոշ է, վոր Ուտոբանուրը «Կապիտալիզմը և սոցիալիզմը համաշխարհային պատերազմից հետո» (Վիննա, 1931, գերմ.) վերտառությունը իր վերջին գրքում հրապարակ է բերում այն թեզը, ըստ վորի դուրս է գալիս, թե կապիտալիստները չափազանց արագ և չափազանց թռիչքաձև են մտցնում նոր տեխնիկական բարելավումները: Հետևանքն այն է լինում, ըստ Բանուրի, վոր շահվում են առանձին կապիտալիստները, բայց ֆնասվում է ամբողջ «հասարակությունը», վորովհետև զարգանում է գործազրկությունը, ավելանում է վերադիր ծախքերի ամբողջությունը (գործազուրկներին ցուցց տրվող բոնուսները և այլն) ու «հասարակությունն» այդպիսով կորցնում է.— «սոցիալական ծախքերը» դուրս են գալիս անհատ ձեռնարկատիրոջ յստացած շահից ավելի, ուսցիոնալացումը դուրս է գալիս կեղծ ուսցիոնալացում: Սոցիալիզմի ժամանակ,— հաստատում է այդ ինքնատիպ մտածողը,— զարգացումը կգնար ավելի հանգիստ, ավելի դանդաղ ու ավելի բարեկալից կերպով. մեքենաները կմշտցվեյին միայն այն ժամանակ, յերբ նրանք առաջ չեյին բերի գործազրկություն և այլն):

Ամբողջ այս «կեղծ գերիմաստությունը» «կեղծ ուսցիոնալացման» աթիլի՝ չի դիմանում մարքսիստական քննադատության ամենաթույլ շփումին անգամ:

Վորովհետև իրականում դժբախտությունն այն չէ, վոր նա ուսցիոնալացումը կիրառում է, ինչպես կապիտալիզմը, շահագործական բաղայի վրա: Բավական կլիներ միայն կրճատել աշխատանքային ուրը և ավելացնել աշխատավարձը, վորպեսզի գործազրկությունը և վճարունակ պահանջի բացակայությունը անհետանային, իսկ պլանային տնտեսությունը կվոնչացներ ձգնաժամը: Սակայն բոլոր այս բաներն սկզբունքորեն անհամատեղելի յեն արտադրության կապիտալիստական ձևի հետ: Սրանում է «չարիքի արմատը», այլ վոչ ամեններն արագ տեխնիկական պրոգրեսի մեջ, վորպես այդպիսին: Բանուրն այստեղ ամբողջապես կանգնում է կապիտալիզմի ուսակցիոն ջատագոջների տեսակետի վրա: Կապիտալիզմն այժմ կասեցնում է տեխնիկայի զարգացումը, այլ վոչ ամեններն արագացնում այդ զարգացումը: Սոցիալիզմը չի կրճատում, այլ, ընդհակառակը, զգալի չափով արագացնում է տեխնիկական առաջադիմության տեմպերը. նա վերցնում է կապիտալիստական կապանքները և դրանով իսկ ազատում է տեխնիկա-

կան հեղաշրջման սւժերը, վորոնք արդեն հասունացել են կապիտալիստական արտադրական հարաբերությունների ծոցում:

Ահա դա յե կապիտալիզմից տեխնիկական սոցիալիզմին անցնելու ամենաընդհանուր ֆորմուլան: Սակայն այդ ֆորմուլան, իհարկե, բոլորովին անբավարար ե, հատկապես, յեթե խոսքը վերաբերում ե կոնկրետ իՍՆՄ-ին: Վորո՞վհետե պետք ե ուշադրության առնել և՛ ամբողջ զարգացման բնական պատվանդանը և՛ պատմականորեն դասավորված հարաբերությունների ամբողջ հյուսվածքը.— ա) յերկրի բնական «հարստությունները», բ) նրա տեխնիկական մակարդակն ընդհանրապես, գ) նրա տեխնիկական-տնտեսական զարգացման ընթացիկ փուլը, դ) նրա փոխհարաբերությունը կապիտալիստական շրջապատի հետ և այլն:

Մեր հեղափոխությունը թևակոխել ե վերակառուցման ժամանակաշրջանը (վորը մի շրջան ե, յերբ ավարտվում ե սոցիալիստական հիմքի կառուցումը)— տեխնիկական հեղաշրջման փուլը: Սա մի փաստ ե, վորն անհնարին ե ժխտել: Այդ պատճառով, ըստ ընկ. Ստալինի միանգամայն ճիշտ դիտողության, «տեխնիկական վերակառուցման շրջանում վճռում ե ամեն ինչ»: Տեխնիկական տեսակետից մենք կրճատ ժամկետներում անցնում ենք մի քանի ժամանակաշրջաններ.— 1) յերբ մենք առկա ունենք հին տեխնիկական հիմք, վորը բնորոշ եր դեռևս ցարական Ռուսաստանի բուրժուական-կալվաճատիրական տնտեսության համար (մեր պատմական ժառանգությունը). 2) յերբ մենք առկա ունենք արդի կապիտալիստական տեխնիկան (իմպորտային սարքավորման տիպի). յերբ սոցիալիզմն սկսում ե զարգանալ իր սեփական տեխնիկական հիմքի վրա (այսինքն՝ յերբ նա սկսում ե մշակել սոցիալիստական տեխնիկայի, բառիս նեղ իմաստով, նոր տիպ):

Հասկանալի յե անշուշտ, վոր այստեղ հարկավոր ե ամբողջ ուժով ընդգծել այս բաժանման պայմանականությունը և այն ել զանազան տեսակետներից, նախ և առաջ պետք ե նկատել, վոր ամեն մի տեխնիկա (մեքենա, տեխնիկական մեթոդ կամ յեղանակ և այլն), վորը մտցված ե սոցիալիստական արտադրական հարաբերությունների սխառեմի մեջ, դրանով իսկ դառնում ե սոցիալիստական. այնուհետև՝ ամեն մի տեխնիկա, վորը մտցված ե սոցիալիստական պլանային տնտեսության սխառեմի մեջ, մինչև իսկ «զուտ-տեխնիկական» այլևս այն չե, վորովհետև մեքենաները, ամբողջ գործարանային կոմպլեքսները և առհասարակ տեխնիկական-արտադրական կոմպլեքսները գուզորդվում են այլ կերպ, համակցվում են նոր ձևով ու դրանով իսկ ամբողջությամբ ներկայացնում են այլ կարգի բարդ տեխնիկական ամբողջություն. իրապես, զարգացման մի փուլը միա-

հյուսվում ե մյուսի հետ. մեզնում միաժամանակ իրար կողքի գոյություն ունեն տարբեր տեխնիկական տարրեր՝ և՛ հին ժառանգություն, և՛ իմպորտային (կամ պատրաստված իմպորտային տիպարով) սարքավորում, և՛ բոլորովին նոր տիպի սարքեր: Սակայն և այնպես վերոհիշյալ բաժանումն իր իմաստն ունի.— ֆեոդալական հասարակությունը տեխնիկական բնորոշվում ե ջրաղացով, կապիտալիզմը—շոգեմեքենայով, սոցիալիզմը—էլեկտրոնեղեկայով, ամբողջ տնտեսության «մինչև վերջը» ծավալված էլեկտրիֆիկացիայով: Սոցիալիզմի տեխնիկական հեղափոխությունը (կամ, ավելի կոնկրետ, իՍՆՄ տեխնիկական վերակառուցումը) պետք ե զարգանա, լայն ասպարեզ տալով կապիտալիզմի կողմից կաշկանդված բոլոր ուժերին և ըստ իր վերափոխելով նրանց: Այդ տեխնիկական վերակառուցման հիմնական գծերը,—վերակառուցում, վորը հենված ե Միության հրակայական բնական հարստությունների վրա,—մոտավորապես հետեվյալն են.

1. Յերկրի ինդուստրացում—արտադրության միջոցների հսկայական աճումն ըստ նրանց քանակի,—հզոր էլեկտրոցենտրալներ, մետալուրգիական գործարանների, մեքենակառուցման գործարանների, քիմիական կոմբինատների կառուցում, նոր հանքահորերի հիմնադրում և գործարկում, ամբողջ գյուղատնտեսությունը մեքենական արդյունաբերության ճյուղ դարձնելը, նոր տիպի բնակարանների և քաղաքների, ճանապարհների, կամուրջների կառուցում և այլն և այլն:

2. Տնտեսության էլեկտրիֆիկացիա, լրիվ և ծավալված գերհզոր տիպի կենտրոնական էլեկտրակայանների և կենտրոնական հիդրոէլեկտրակայանների կառուցում: Նրանց շրջանացումը: Հզոր լարվածության էլեկտրահզորությունների ողակներ: Էլեկտրամագնիստալներ: Տրանսպորտի էլեկտրիֆիկացիա:

3. Տրանսպորտի բոլոր տեսակներին զարգացում. էլեկտրիֆիկացված յերկաթուղիներ, ավտոտրանսպորտ, ջրային ու ողային տրանսպորտ և այլն. հաղորդակցության ճանապարհների խիտ ցանցի ստեղծում. յերկրի ավտոմոբիլացում:

4. Ներքին ալյուման շարժիչներին, հատկապես շարժական շարժիչներին մասսայական արտադրություն և կիրառում տրակտորների, ավտոմոբիլների, մոտոցիկլետների, ողանավերի համար և այլն:

5. Արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության բազմակողմանի մեքենայացում: Տրակտորների մասսայական կիրառում: Կոմբայններ: Ավելի բարձր կարողություններ ունեցող, քան կապիտալիզմի որով, մեքենաների նոր

տիպեր: Երեկտրական գուլթաններ: Ազրոֆիզիկայի զարգացումը և կիրառումը: գյուղատնտեսական արդյունաբերություն և նրա արտադրանքի վերամշակման տեխնիկական միավորում կոմբինատորման բազայի վրա:

6. Նոր նյութերի, հումքի, նոր վառելանյութերի գործածություն: Բարձր տեսակի պողպատներ: Թեթև նյութեր (ալյումին, մագնիում և այլն): Կերպելի զանգվածներ: Նոր շինանյութեր: Հերձաքարային տնտեսություն զարգացում և այլն:

7. Արդյունաբերություն և գյուղատնտեսություն քիմիացում: Քիմիական արդյունաբերություն վճռական ծավալում: Սենթետիկ քիմիա: Կոմբինատի սկզբունքի լայն ոգտագործում: Մետալուրգիա: Ածուխ: Գազիֆիկացիա: Անտառաքիմիա: Արհեստական նրբաթել: Պարարտանյութերի արդյունաբերություն: Ապատիտներ և նեֆելիններ:

8. Արդյունաբերություն վերականգնման արտադրական պրոցեսի լայն կերպով կատարվող ավտոմատիզացման հիման վրա:

9. Կապի սպասարկման զարգացում: Առաջնակարգ փոստ-հեռագրական և հեռախոսային ցանցի, ռադիո-կայանների ցանցի ստեղծում: Նկարների հաղորդում հեռավորություն վրա: Բովանդակ խՄՀՄ-ն միասնական կուլտուրական ամբողջություն դարձնելը զարգացած կապի սպասարկման տեխնիկական բազայի վրա:

10. Գունավոր, ստերեոսկոպիկ, հնչուն կինեմատոգրաֆիայի զարգացում:

11. Գիտություն ամենալայն զարգացում և կիրառում: Ինստիտուտների, լաբորատորիաների, բուհերի և բուհերի շինարարություն ու նրանց առաջնակարգ տեխնիկական սարքավորում:

Մյուս կողմից, մոտավորապես, յերկրի տեխնիկական վերակառուցման ուղիվները: Հարկավոր է, սակայն, ասել, վոր գիտական հետազոտական վորոշ նոր խնդիրների լուծումն իր հետևից կարող է բերել մի շարք նոր տեխնիկական խնդիրների գործնական զրուծում (հեղիոտեխնիկայի հարցեր, էներգիայի հաղորդումը հեռավորություն վրա առանց լարերի, նրբաշերտ մեկուսացում ու անցումն հզոր և տարուն կուտակիչներին, ջրի և ոգի ջերմությունների տարբերություն ոգտագործումը հյուսիսում և այլն): Մյուս կողմից, խՄՀՄ յերկրաբանական հետազոտությունը և բնական հալոստությունների ուսումնասիրությունը, հարստություններ, վորոնք ուսումնասիրված են միայն աննշան տոկոսով, կարող է դնել թե նոր արտադրությունների, թե նոր տեխնոլոգիական պրոցեսների, թե արտադրական միավորների հարցը և մինչև իսկ արտադրական կենտ-

րոնների նոր տեղավորման հարցը: Միանգամայն ակներև է, վոր վորքան ավելի ինտենսիվ կատարվի գիտական հետազոտական աշխատանքը, վորն առաջ է մղվում շինարարություն վիթխարի պահանջներին, նոր քանակություններ (նոր կառուցումների ծավալները, խորհրդանշականությունների և համատարած կոլեկտիվացման շրջանների ծավալները, մասսայական արտադրությունը) և նոր վորակները (գործարանների նոր տիպը, կոմբինատի, պլանայնություն, շրջանացման սկզբունքը, արտադրության պրոցեսների երկարաժամկետային, մեքենաների ու ապարատների նոր տիպերը և այլն), այնքան ավելի հզոր կլինի և՛ տեխնիկայի զարգացումը, այնքան ավելի հաղթական առաջ կշարժվի և՛ սոցիալիստական հասարակության եկոնոմիկան:

3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ, ԿԱԴՐԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ՏԵԽՆՈԳԻԿԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Կարևորագույն արտադրողական ուժն է հանդիսանում ինքը բանվոր դասակարգը, գրեթե Մարքսը: Յեթե այս հարցը կապակցություն մեջ դնենք մեր հասարակակարգի առանձնահատկությունների հետ, դժվար չի լինի նկատել, վոր տվյալ դրույթը մեզ համար ունի հատուկ կարևոր, բացառիկ, վճռական նշանակություն, վորովհետև, վերջին հաշվով, սոցիալիստական շինարարությունը բոլոր հաշվողությունները բղխում են մասսաների ստեղծագործական յեռանդի ծավալումից: Հենց այն պատճառով, վոր բանվոր դասակարգն իրեն դրում է ղեկավար դասակարգ, հեղեմոն, կազմակերպիչ, պատմություն սուբյեկտ, և վոչ նրա նյութը, նա տարեցտարի հրապարակ է նետում և գործի յե դնում լրացուցիչ կենսարար յեռանդի շարունակ նորանոր ռեսուրսներ: Ուստի խոսքը պետք է վերաբերի վոչ միայն «մեռյալ տեխնիկային» (այսինքն՝ մեքենաներին, ապարատներին, արտադրության միջոցներին ընդհանրապես) ու վոչ միայն տեխնիկական յեղանակներին (տեխնոլոգիական պրոցեսների ռեցեպտուրա), այլ և կենդանի մարդկանց, վորպես արտադրության կարևորագույն գործոնի, նրանց տեխնիկական վորակավորմանը, այսինքն՝ նրանց գիտելիքներին և նրանց տեխնիկական հմտությունը, նրանց տեխնիկական համապատասխանությունը նոր տեխնիկական խնդիրներին ու՝ ամենաառաջին հերթին՝ արտադրության այն նոր միջոցներին, վորոնց պայմաններում և վորոնց ոգնությունը նրանք պետք է աշխատեն: 1871 թ. ֆրանսական բանակի ջախջախումից հետո ասում էյին, վոր հաղթեց «գերմանական դպրոցական ուսուցիչը», այսինքն թե մասսաների տարրական դրագիտություն և

ամենատական ինտելիգենտության շնորհիվ Բիսմարկի զորքերը հաղթություն տարան Նապոլեոն III-ի զորքերի հանդեպ: Կասկածից վեր եւ վոր շնորհիվ գերմանական ինդուստրիալ բանվորի բարձր տեխնիկական վորակավորման և գերմանական տեխնիկների ու ճարտարագետների խիստ բարձր վորակի (միաժամանակ ել բացառիկ կերպով ուժեղ նաև քանակով) Գերմանիան կարողացավ համաշխարհային պատերազմում միանգամայն բացառիկ դիմադրություն ցույց տալ թշնամիներին, վորոնք շատ շատ անգամ գերազանցում էին Գերմանիայի ուժերին թե մարդկանց թվով, թե միջոցներով և թե ֆինանսական հզորությամբ:

Նայենք այդ տեսակետից մեր մոտավորապես պատկեր: Մենք պետք է ներգրավենք բազմաթիվ միլիոն նոր մարդիկ արդյունաբերական արտադրության պրոցեսի մեջ: Խոսքը վերաբերում է հետևապես, բազմաթիվ միլիոն մարդկանց, վերցված (և այն ել իր զգալի մասով) գյուղական կյանքի պայմաններից, մարդկանց, վորոնք չունեն արտադրական տրագիցիա, անձանթ են քաղաքին, գործարանին, մեքենային: Կոպիտ և մոտավոր հաշիվներով, այդպիսի մարդկանց թիվը 1937 թվի վերջում կլինի 18 միլիոնից ավելի: Այդ նոր մասսան, սակայն, կհակադրվի աշխատանքի առավել կատարելագործված գործիքներին, բարդ դադգոհներին, նուրբ ապարատներին, անընդհատ արտադրական հեղեղին և այլն: Խնդիրը վերաբերում է, սակայն, վոչ միայն քաղաքին, այլ և հենց գյուղին: Դյուզլը դադարում է գյուղ լինելուց, վորովհետև ամենակարճ ժամկետներում նա ինքն ինդուստրացման է յենթարկվում, և այն իմաստով, վոր այնտեղ հաստատվում են զուտ արդյունաբերական ոջախներ, և այն իմաստով, վոր ինքը գյուղատնտեսական արտադրությունն ավելի ու ավելի կազմակերպվում է արդյունաբերականի տիպով ու գյուղ են փոխադրվում հսկայական թվով բարդ մեքենաներ և տրակտորներ. գյուղ են փոխադրվելու հսկայական քանակությամբ հանքային պարարտանյութեր. գյուղում ավելի ու ավելի կպահանջվի հատություն՝ գործ տեսնելու տեսակավոր սերմացուներով և այլն. գյուղում անասնաբուծությունն ընկնում է ելկտրալարի իշխանության տակ: Մի խոսքով, այստեղ ևս ծառանում է վորակյալ աշխատանքի, տեխնիկական կուլտուրական մասսայի, զրադետ, վորակյալ բանվորների, տեխնիկներին և ճարտարագետներին, փորձակայաններին, լաբորատորիաներին և գիտական-հետազոտական ինստիտուտներին աշխատավորների միևնույն պրորբմը: Յեթե լավ կռադատենք այն, հիրավի հսկայական, պահանջները, վորպիսին առաջադրում է սրցիալիստական շինարարությունը, յեթե նկատի առնենք ամբողջ զարգացման տեմպերի արագությունը և յեթե, վերջապես, նայենք այն նոր միլիոնավոր մարդկանց վիրակին, վորանք դնում են համարյա բոլորովին իրենց

անձանթ մեքենական աշխարհը, — մեր առջև իր ամբողջ հասակով կծառանա սրցիալիստական շինարարության համար մարդկային ուժեր պատրաստելու պրորբլեմը: Մեզ մոտ այս բնագավառում դեռևս գոյություն ունի շատ մեծ ձեղք, վորը կարող է դառնալ սպառնալից, յեթե մենք ամեն ջանք չգործադրենք այդպիսին վերացնելու համար: Այդ առթիվ ահագանգեր իր ժամանակին տվել են արդեն մեր մի շարք խոշոր շինարարությունները, ինչպես՝ Ստալինգրադի տրակտորի գործարանը, Գորկու (նախկին Նիժնի-Նովգորոդի) ավտոգործարանը, «Գիգանտի» տրակտորի պարկը, լուցիկ գործարանները և այլն: Կոտրովածներին, խոտանի տոկոսի մեծությունը, արտադրանքի վատ վորակը, ձեռնարկության աննշան եֆեկտիվությունը, շինարարարության աննշան եֆեկտիվությունը և այլն, — սրանք արտահայտություն են այն անհամապատասխանության, վորի մասին մենք արդեն խոսում ենք: Այդ վերաբերում է և՛ տեխնիկական «ստորին խավին» (բանվորական կազմի թույլ պատրաստությունն ու անվորակ լինելը, խակությունը, անտաղությունը), և՛ տեխնիկական «վերնախավին» (տեխնիկական դեկավադության անվորակությունն ու թուլությունը), և՛ վարչատնտեսական վերնախավին, վորը նույնպես կանգնել է (այդ պետք է հատկանալ) նոր տիպի խնդիրների առջև, յերբ եկոնոմիկան ուղղակի միաձուլվում և համաձուլ է տեխնիկայի հետ: Այդ պատճառով մեր հակառակորդները մեծ հույսով նայում էին, թե ինչպես «ոռսական արջերը» պետք է կոտրատեն արտասահմանից ներմուծված նուրբ մեքենաները և ապարատները: Այդ քաղցր հույսերն, իհարկե, չեն իրականանա, մենք կսովորենք տեխնիկան, մենք կտիրապետենք նրան նույնպես, ինչպես տիրապետեցինք պատերազմելու, կառավարելու, մասսաներին կազմակերպելու արվեստին, ինչպես սովորեցինք բարձրացնել տնտեսությունը: Սակայն մենք, հասկանալի յե, չափազանց շահագրգռված ենք, վորպեսզի 1) կարճենք ուսուցման ժամկետները, 2) կրճատենք ուսուցման ծախսերը, 3) ստանանք մարդկանց իսկական առաջնակարգ տեխնիկական վորակավորում:

Այդպիսով, ուրեմն, այստեղ կուլտուրական հեղափոխության պրորբլեմը շրջվում դառնում է տեխնիկական կուլտուրայի պրորբլեմ: Իհարկե տեխնիկական կուլտուրականության նախադրյալ պետք է ծառայի կուլտուրայի վորոշ մակարդակ ընդհանրապես: Ուստի անհրաժեշտ է վերացնել տարրական ընդհանուր անգրագիտությունը: «Դպրոցական ուսուցիչը» լայն հասարակայնության ողնությամբ պետք է կատարի իր գործը նաև մեղնում: Բավական է ասել, վոր գոյություն ունի անմիջական, եմպիրիկորեն հաստատվելի խում գրագիտության բարձրության և աշխատանքի արագության միջև: Դոնբասը, — վորտեղ, չնայած մեքենայացմանը, արդ-

Ֆինպլանները կատարման հարցերը դրված են մնում տակավին իրենց խիստ սուր բնույթով,—աչքի յե ընկնում անգրագետների (15 տոկոս) և կիսագրագետների համեմատաբար բարձր տոկոսով։ Խա կ, ան վո-
րա կ, հոս ու ե կ ա գ մ, պրոլետարական կոմիսարները չստացած, տարրական գրագիտությունեց գուրկ և տեխնիկական բոլորովին ան-
կիրթ,—ահալասիկ ալն գլխավոր խոչընդոտը, վորը կանգնած ե Դոն-
բասի արագ վերելքի ձանապարհին։ Տարրական անգրագիտություն վե-
րացման հետ գուզընթաց պետք ե գնա նաև տեխնիկական անգրա-
գիտություն վերացումը։ Մեզ հարկավոր ե ընդհանրապես հասկանալ, վոր
ամբողջ մեր կուլտուրան պետք ե լինի շատ ավելի քիչ բանա-
հյուսական, «հումանիտար» բառիս հին նշանակությունը և վորոշ
իմաստով շատ ավելի «տեխնիկական»։ Ավատական ռեժիմը կրթու-
թյան (խակ սա կուլտուրական կյանքի խիստ կարևոր կողմն ե) բնա-
գավառում մեզ մոտ բնորոշվում եր դասական գիմնագիտով, և մեռած
հին լեզուների ուսուցիչը կենտրոնական դեմք եր այդ բնագավառում։
Դեպի կապիտալիզմի կողմն արվող քայլերը հրապարակ բերին ռեա-
լական և տեխնիկական դպրոցներ։ Մեզնում պոլիտեխնիկական
դպրոցը կրթություն ամբողջ սիստեմի հիմքն ե։ Դրան
համապատասխան փոխվում ե կուլտուրայի ամբողջ կազմը. կուլտու-
րան ամբողջովին դառնում ե շատ ավելի տեխնիկական։ Սա-
կայն այդ ամենը չի նշանակում, վոր մեր «տեխնիցիզմը» պետք ե
լինի «հոգին» ու «մարմինը» ալլանդակով՝ ամերիկացիների նեղ ու
գործածող տեխնիցիզմի ընդորինակությունը. պլանային տնտեսու-
թյունը մեզնում պահանջում ե հասկանալ վորջ հասարակական ամ-
բողջության հիմնական փոխադարձ կապերը, շահերի ընդարձակությունը,
աշխարհահայացքի խորությունը՝ վորևե կոնկրետ բնագավառում մասնա-
գիտացման դեպքում։ Տեխնիկան մեզնում այժմ գտնվում ե ուշա-
դրություն կենտրոնում։ Սակայն նա ինքը դիտվում ե վորպես միջոց
վորոշակի նպատակների համար—մասսաների աճող պահանջներ-
ի բավարարման համար։ Մասսաների զարգացումը, նրանց նյութա-
կան և կուլտուրական մակարդակի բարձրացումը—սա յե գլխավոր և
ամեն ինչ վորոշող նպատակը ի հակադրություն շահույթի ու վաստա-
կի սկզբունքին, ի հակադրություն սոսկ տեխնիցիզմին, վորը տեխնի-
կան դարձնում ե մարդու գլխին կանգնած մի ֆետիշ։

Տեխնիկական անգրագիտությունը վերացնելու համար հարկա-
վոր ե գործի գնել բոլոր սրան վերաբերող ներգործություն
լծակները.—ամբողջ դպրոցական ցանցը, ամբողջ արտադրողական
ցանցը, հեռակա ուսուցման կադմակերպությունը, մասնագիտական
տեխնիկական դպրոցական հաստատությունները, բոսահերը, գիտա-
կան-հետազոտական ինստիտուտները, տեխնիկական պրոպագան-
դի հատուկ կազմակերպությունները, տեխնիկական ընկերու-

թյունները և այլն և այլն,—այս բոլորը պետք ե մոբիլիզացիայի յեն-
թարկվի տեխնիկական անգրագիտություն վերացման համար և տեխնի-
կական վորակավորման բարձրացման համար ինչպես հորիզոնական գծով
(ըստ մասնագիտությունների, ըստ ճյուղերի), նույնպես և ուղղահայաց
գծով (բանվոր—վորակյալ վարպետ-բանվոր, միջակ տեխնիկ—ճարտա-
րագետ և այլն)։ «Ստորին» խնդիրն ե—տեխնիկական միտիմոմի կի-
րառումը։ «Բարձրագույն» խնդիրն ե—բարձրորակ (քաղաքականապես
կոփված) վարչական-տնտեսական և ինժեներական կազմի ստացումը։
Այս խնդիրները պետք ե լուծել ամենայն յեռանդով, արագությամբ և
հաստատամտությամբ։

Յեթե ձևակերպենք հիմնական դիրքավորումները տեխնիկական
պրոպագանդի (և տեխնիկական ուսուցման) գործում, կտեսնենք,
վոր այդ դիրքավորումները հետևյալն են.—պայքար տեխնիկական
ձեղքվածքների համար, պայքար ընթացիկ արդֆինպլանի կատարման
համար յուրաքանչյուր արտադրական միավորի մեջ, պայքար հեռա-
նկարային պլանների կատարման համար։

Հիմնական տեղը պետք ե բռնի պայքարը հնգամյա
պլանի կատարման համար և նախապատրաստությունը յերկ-
րորդ հնգամյակի համար։

Սակայն այստեղ անհրաժեշտ ե մատնանշել հետևյալը։ Մինչդ
այժմ մեր պլանները կազմել են ծանրանալով տնտեսական կող-
մի վրա, առանց բավականաչափ մշակելու տեխնիկական կողմը,
առանց մշակելու տեխնիկական ցուցանիշները։ Մինչդեռ մեր զարգաց-
ման ընթացիկ փուլը հրամայաբար պահանջում ե մեզնից ուշի-ուշով
մտածել, կշռադատել վճռական և հիմնական տեխնիկական ցուցանիշների
(քանակական և վորակական) ամբողջությունը։ Իհարկե, այդ ցուցանիշ-
ները պետք ե դիտվեն տնտեսական ցուցանիշների հետ նրանց ունեցած
անխզելի կապակցությամբ, սակայն տեխնիկային պետք ե հատ-
կացվի պատշաճ տեղ պլանում և այդ պլանի բոլոր ողակներում, սկսած
գործարանից և վերջացրած ամբողջ ժողովրդական տնտեսություն
կոնտրոլ թվերով։ Մեքենաների և տեխնոլոգիական պրոցեսների տի-
պերի ընտրությունը, համապատասխան ոգտակար գործողություն գոր-
ծակիցները, վերակառուցման տեխնիկական կողմը, գլխավոր տեխ-
նիկական գծի մշակումը՝ հատուկ հարվածային տեխնիկական
խնդիրների առանձնացումով, տեխնիկական վերակառուցման պլան-
ներն ըստ ճյուղերի և ցած—ըստ գործարանների,—այս
բոլորն այժմ հասունացած խնդիր ե, վորին պետք ե լուծում տալ
ինչպես ել վոր լինի։ Գործի պետք ե դրվի վոչ միայն տնտեսական
հաշվետվություն, այլև տեխնիկական հաշվետվության սիստեմը, հաշ-
վետվություն, վորը հենվելու յե ճշգրիտ չափողական գոր-
ծիքների ոգնությունը կատարվող սիստեմատիկ վերահսկողություն

վրա: Հատկապես այդ հնարավորությունն կտա մոբիլիզացիայի յենթարկելու մասսայական ուղադրությունը և կազմակերպելու մասսայական վերահսկողություն տեխնիկական ցուցանիշների կատարման վերաբերմամբ: Հատկապես այդ հնարավորությունն կտա ամբողջ տեխնիկական պրոպագանդին տալու գործնական-ռազմարար, թեորիան և պրակտիկան միմյանց հետ ամրակուռ շաղկապող բնույթ. տեխնիկական պլանի և տեխնիկական ցուցանիշների կատարման համար մղվելիք պայքարի գաղափարը պետք է դառնա կենտրոնական գաղափար, վերի շարքը պետք է կատարվի տեխնիկական պրոպագանդի աշխատանքը:

Այդպիսով արդֆինպլանը պետք է աճի դառնա տեխարդֆինպլան, ուժեղացնելով ու ծավալելով իր տեխնիկական մասը: Այդ նշանակում է գործարանի համար, վոր կուսակցության, կառավարության, ԺՏԳՍ-ի և միավորման կողմից նշված՝ արտագրանքի կոնկրետ պլանների, հիմնական շինարարության մասշտաբների ու ժամկետների և այլն հիման վրա պետք է մշակվի համապատասխան տեխնիկական ձեռնարկումների պլան, վորն իր մեջ պետք է դետեղի մոտավորապես հետևյալ հիմնական մասերը.—

1) տեխնիկական ցուցանիշներ—քանակական և վորակական—յուրաքանչյուր դադդյահի, ագրեգատի համար, ամբողջ ցեխի համար և գործարանի համար. 2) տեխնիկական ձեռնարկումներ աշխատանքը ցեխի ներսում և ցեխերի միջև շաղկապելու համար. 3) ձեռնարկումների դումար՝ բանվորներին, տեխնիկներին, ճարտարագետներին, տնտեսավարներին (ինչպես հին, նույնպես և նոր յեկողներին) համապատասխան տեխնիկական վորակավորումով ապահովելու համար. 4) ոսցիոկան նվաճումների իրացում՝ արդյունարերություն տվյալ ճյուղում. 6) բանվորներին և գյուտարարների առաջարկներին իրացում: Այնպիսի խնդիրներ, ինչպես, որինակ, պայքարը բրակի դեմ, մնացուկների ոգտագործումը և այլն, կարող են ինչպես հարկն և լուծում ստանալ միայն տեխնիկական պլանի գոյություն դեպքում: Այդպիսի պլանից վորպես հետևություններ (և վորպես հաջորդող նախադրյալներ դա նորից կազմելու համար) բղխում է մի շարք չափազանց անհրաժեշտ ձեռնարկումների կիրառումը կյանքում, ինչպես՝ դադդյահների տեխնիկական պասպորտիզացիան (յուրաքանչյուր դադդյահ պետք է ունենա իր տեխնիկական պասպորտը, վորտեղ նշված պետք է լինի նրա ամենամեծ արտադրական եֆեկտիվությունը և սրա իրացման տեխնիկական պայմանները), շիխտայի ստանդարտացումը մետաղագործության մեջ, հուշատետրերի-հրահանգների ստեղծումը՝ նոր մեքենաների և նոր տեխնոլոգիական պրոցեսների համար և այլն: Այդպիսի տեխպլանը, վորը մատչելի կլինի միայն տվյալ ձեռնարկում

թյան բանվորներին լայն մասսաներին, այլև մյուս գործարաններին, հանդիսանում է վորպես բազա տեխնիկական փորձի ամենաինտենսիվ փոխանակություն կատարելու համար: Այդպիսի տեխպլանի հիմնական տարրերը, հասկանալի չէ, գոյություն ունեն յուրաքանչյուր ձեռնարկության մեջ: Սակայն անհրաժեշտ է խիստ ուժեղացնել տեխնիկական պրոբլեմների մշակումը, նրանց մեկը մյուսի հետ շաղկապել բովանդակ գործարանի համար իր ամբողջությունը և այդ գաղափարը տանել դեպի վեր մինչև այն աստիճան, վոր մշակվեն տեխնիկական վերակառուցման կոնկրետ պլաններ նախնական հատուկ տեխնիկական քննություն չեն թարկելով նրանց:

Այս հիման վրա, սրան համեմատ, պետք է մղել տեխպրոպագանդը, վորպես կադրերի արտադրություն պրոցեսի բաղկացուցիչ մասը. թե՛ նոր բանվորներին լայն խավերի տեխնիկական անգրագիտություն վերացումը, ըստ վորում նրանք պետք է դաստիարակվեն արտադրության միջոցներին սոցիալիստական վերաբերմունք ցույց տալու վորով, թե՛ սովորած բանվորների արտադրական վորակավորման բարձրացումը, ըստ վորում պլանվոր ուղադրությունը պետք է կենտրոնացվի համապատասխան բնագավառներում գոյություն ունեցող տեխնիկայի նորագույն նվաճումներին վրա, թե՛ միջին տեխնիկական անձնակազմի տեխնիկական վորակավորման բարձրացումը և թե՛, վերջապես, վարչատնտեսական ու ինժեներական կազմի հիշյալ վորակավորման բարձրացումը՝ հարստացնելով այդ խավերին արտասահմանյան տեխնիկայի նվաճումներով,—այս ամբողջ աշխատանքը պետք է զարգանա ընթացիկ և հետանկարային տեխարդֆինպլանների մշակման ու կատարման համար մղվելիք պայքարում: Այստեղ նույնպես ամբողջ յեռանդով պետք է անցնել հարվածային աշխատանքի, սոցմրցման մեթոդին, մրցություն կոնֆերանսների և մրցականների, տեխնիկական մարտերի և փոխադարձ մրցահրավերների մեթոդին, վորը փայլուն կերպով իրեն արդարացրեց ամբողջ մեծ սոցիալիստական շինարարության փորձով:

4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԱՐԴԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ՅԵՎ ԱՅՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կադրեր ստեղծելու համար, ինչպես և ամբողջ շինարարության համար, մեզ տրված են չափազանց սեղմ ժամկետներ: Արագ տեպերի հարցը, այդ պատճառով, և այս բնագավառում վճռական հարց է հանդիսանում: Սակայն տեպերի այդ արագացմանը հասնել կարելի չէ միայն այն դեպքում, յեթե մենք հենվենք տեխնիկայի վերջին նվաճումների վրա հենց տեխնիկական պրոպագանդի բնագավառում, պայմանով, վոր մեր աշխատանքին

տրվի վորոշ պլանայնություն և մասսայական բնույթ, նկատի առնելով միլիոնավոր բանվորների ու կոլտնտեսականներին:

«Մենք ծուլ ենք և անհետաքրքիր», — գրել է մի ժամանակ Պուշկինը ռուս ժողովրդի մասին: Այն ժամանակից հետո շատ ջուր է հոսել. ազնվականության ներկայացուցիչներն անցել են հավիտենականության գիւղը, «ժողովուրդը» վերափոխվել է իր «բնությամբ», պրոլետարիատը ցուցաբերում է ամեն ինչ, բայց միայն վոչ ծուլություն: Սակայն մեզնում գեոկոս մնացել են գավառիկների սովորութները, թեև դրանք յերևան չեն գալիս նախկին ուժով: Մենք չափազանց հետ ենք մնացել տեխնիկական պրոպագանդի տեխնիկական բազայի տեսակետից, Մենք համարյա չունենք արտադրական-տեխնիկական կինոփառապաններ: Մենք, բառիս բուն իմաստով, վոչ ինչ չունենք սոցիալապես մտածված առարկայական ուսուցման ձեռնարկների ասպարեզում: Մեր ռադիոհաղորդումը տակավին չի հարմարեցված տեխնիկական պրոպագանդի խնդիրներին: Ձայնավոր ֆիլմը նոր է յերևան յիկել, թեև «համը» ֆիլմերն Արևմուտքի խոշորագույն կինոթոններում այլևս ամենևին գոյություն չունեն: Գունավոր կինոֆիլմը մեզնում անհայտ է: Ստերեոսկոպիկ ֆիլմը նույնպես մեզնում անհայտ է: Նկարների հաղորդում հեռավորության վրա՝ չի գործադրվում և այլն:

Մինչդեռ այս բոլորը խնդիրներ են, վորոնք լուծում են ստացել վոչ միայն լաբորատորային ձևով, այլև արդեն գործածության մեջ են մտել կապիտալիստական յերկրների առորյա կյանքում: Այդ խնդիրներն «ստուգված են» փորձով: Բոլոր այդ հարմարանքներն աճում են կայծակի արագությամբ, իսկ մենք գեոկոս շարունակում ենք մնալ գավառիկներ:

Սրան պետք է վերջ տալ ընդմիջտ, պետք է շատ ավելի համարձակ գնալ ձայների և պատկերների հաղորդման նորագույն տեխնիկայի ոգտագործման ուղղությամբ: Նկատի ունենալով վորակյալ ուժերի տեսակետից մեր աղքատ լինելու հանգամանքը, անմտություն պետք է համարել, վոր խոշոր գիտնականը, կամ տեխնիկը ճանապարհորդեն քաղաքից քաղաք գասախոսություններ և գեոկոսոմներ կարդալու համար. նրանք կարող են միանգամից խոսել ռադիոյով տասնյակ միլիոնավոր մարդկանց համար. քիչ նպատակահարմար է, վոր մեր առավել վորակյալ ուժերը, շտապելով ու հեալով, գիտական աշխատանքը թողնելով նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում, որերով բանավոր դասախոսություններ կարդան. շատ ավելի նպատակահարմար կլիներ, յեթե նրանք գրեյին առաջնակարգ ստանդարտացված դասագրքեր հեռակա ուսուցման համար (ըստ ուսանողների կատեգորիաների), դասագրքեր, վոր կարելի կլիներ տպագրել և տարածել հարյուր հազարավոր ու միլիոնավոր օրինակներով:

հաճախ մակուլատուր հրատարակությունների փոխարեն. հնադարյան կարելի չէ համարել նաև համագումարներն ու կոնֆերանսները հաճախակի աշխարհագրական մի կետում գումարելու մեթոդը, մինչդեռ այդ կոնֆերանսներից շատերը կարելի չէ գումարել ու գործի դնել ուղիով: Հասկանալի չէ, թե ինչպիսի բացառիկ կարևոր նշանակություն ունեն կապի այդ միջոցները տեխնիկական պրոպագանդի համար, փորձի փոխանակման, հանուն տեխադֆինպլանի մղվելիք պայքարի համար: Մենք պետք է աշխատենք, վորպեսզի մեզնում առաջնակարգ գրվածք ունենան տեխնիկական ռադիոհաղորդումը, գունավոր և հնչուն ստերեոսկոպիկ կինո-փառապան արտադրական-տեխնիկական բովանդակությամբ. մենք պետք է ձգտենք նկարները հեռավորության վրա հաղորդելու: Մենք պետք է ստեղծենք ԽՍՀՄ բոլոր անկյուններում, բոլոր կարևորագույն ձեռնարկություններում, բոլոր խոշոր խորհրտնտեսություններում, կոլտնտեսություններում մեքենա-արակտորային կայաններում և այլն, համապատասխան բազաներ, վորտեղից շրջանաձև կտարածվի աշխատանքը:

Մենք պետք է անցնենք տեխնիկական թանգարանների կառուցմանը, ինչպիսին են, որինակ, Լոնդոնի Թանգարանը (Կենսաինգտոնում) և «Գերմանական Թանգարանը» (Մյունխենում): Այս վերջին հիմնարկությունը տեխնիկական պրոպագանդի առաջնակարգ «հիմնական կապիտալն» է: Այստեղ ժողովված են արտադրության կարևորագույն միջոցները, այստեղ ցուցադրվում են կարևորագույն տեխնիկական պրոյեկտներն ըստ արտադրական ճյուղերի պատմական առումով և այն ել շարժողության մեջ դրված. այդպիսով, այստեղ կարելի չէ տեսնել արտադրության ռեալ պրոցեսները, անձամբ ոտուզել նրանց, մանավանդ վոր արտադրության ամենանշանակալի պրոցեսները և միջոցները վերցված են բնական մեծությամբ և վոչ մակետներով ու դիագրամներով: Մեծ սոցիալիստական շինարարությունը պահանջում է մեզնից այդպիսի հուշարձան: Այդ հուշարձանը չեր լինի մեռած բեռ. նա կլինի հզոր տեխնիկական պրոպագանդի կենդանի գործիքը. այնտեղ բազմամիլիոն քաղաքի պրոլետարները և պրոլետարական մայրաքաղաքի այցելուները կկարողանան մոտիկից ծանոթանալ «տեխնիկայի» բոլոր «հրաշքներին», ԽՍՀՄ և արտասահմանի բոլոր տեխնիկական նորություններին. այնտեղ պարզ կերպով ցույց կտրվի կապը պլանային տնտեսության դանազան ճյուղերի միջև և կապը տեխնիկայի, գիտության, եկոնոմիկայի ու սոցիալիզմ կառուցող պրոլետարիատի դասակարգային պայքարի միջև:

Մենք պետք է սկսենք կադմակերպել լավ, մտածված ձևով կառուցված առարկայական ուսուցման ոժանդակներ տեխնիկական պրոպագանդի և տեխնիկական ուսուցման համար: Վոր ամ-

բողջ պրոպագանդը և վողջ ուսուցումը պետք է աճեն գործարանային (և արտադրական ընդհանրապես) պրակտիկայից, ամենևին դրանից չի հետևում, վոր ուսուցման ոժանդակներ (ուսուցման ձևերնարկներ) պետք է հասկանալ միմիայն մեքենաների, ապարատների մասերը կամ գործարանային սարքավորման մյուս պիտույքները: Անհրաժեշտ են մասնագիտական ուսուցման ոժանդակներ ամենատարբեր տիպերի: Այս ասպարեզում խիստ նպատակահարմար է ոգտագործել գերմանական մասնագիտական հիմնարկի («Տեխնիկական դպրոցի Գերմանական կոմիտեյի ուսուցման ոժանդակների կազմակերպություն») հարուստ փորձը, մի հիմնարկի, վորն, ականավոր մանկավարժ-ճարտարագետների ոգնությունը ստեղծել է այդպիսի ոժանդակների լավ մտածված մի ամբողջ սխեմա տարբեր կատեգորիաների, տարբեր հասակի և տարբեր մասնագիտությունների համար:

Ամբողջ յեռանդով մենք պետք է առաջ մղենք տեխնիկական գրականության գործը, սկսած տեխնիկական մարտական թուղթիկներից մինչև հատուկ տեխնիկական սովիդ հանրագիտակները: Մենք պետք է ստեղծենք կենդանի և առաջնակարգ տեխնիկական ժուրնալներ, վորոնք համաքայլ կգնային յեվրոպական և ամերիկյան ժուրնալների հետ, վորոնք կհամախմբեին մեր լավագույն գիտական-տեխնիկական ուժերը ու կպահանջին և՛ մեր թեորիան և՛ մեր պրակտիկան պատշաճ բարձրության վրա: Մենք պետք է ուղղակի հեղեղենք յերկիրը բազմատեսակ տեխնիկական գրականությունը՝ տեղեկատուներով, դասագրքերով, ժողովածուներով, գրպանի հանրագիտակներով, պլակատներով, դիագրամներով և այլն: Սակայն այստեղ ամբողջ ուժով պետք է ընդգծել վորակի խնդիրը, լոգարիթմների աղյուսակը թվանշանների սխալներով.—այդ միևնույնն է թե կեղծ կշեռք ունենա: Այս բնագավառում պետք է հրապարակել, ըստ հնարավորություն, միայն առաջնակարգ նյութ:

Մենք դեռևս պետք է ստեղծենք տեխնիկական գրադարանների, ցուցահանդեսների, գծագրերի ու դիագրամների պահեստարանների մի ամբողջ ցանց և այլն և այլն: Սակայն ընդ սմին, շարունակ հարկավոր է հիշել, վոր աշխատանքը պետք է լինի պլանային, նա պետք է լինի մասսայական, նա պետք է կատարվի առավել կատարելագործված տեխնիկական միջոցներով: Հարկավոր է ընտելանալ նոր արագություններին, նոր մեթոդներին, նոր տեխնիկային նաև հենց տեխնիկական պրոպագանդի գործում:

5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԹՆՈՒԹՅՈՒՆ

Տեխնիկական պրոպագանդն արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, յեթե նա վոտքի հանի, մոբիլիզացիայի յենթարկի, մարտի

դուրս բերի մարդկանց մեծ կազմեր, վորոնք իրենց հերթին փոխադարձաբար կներգործեն աշխատավորության առավել լայն խավերի վրա: Ուստի բացառիկ կարևոր խնդիր է հանդիսանում տեխնիկական աշխատի վի ստեղծումը, բանվորական տեխնիկական հասարակայնության ստեղծումը և գիտական, տեխնիկական հասարակայնության ստեղծումը ճարտարագետների, տեխնիկների և գիտնականների շրջանում: Այստեղ անհրաժեշտ են կազմակերպական այնպիսի ձևեր, վորոնք բավականաչափ յերաշխիք տային ընդդեմ կազմակերպությունների բյուրոկրատական քաղցման, ձևեր, վորոնք թույլ չտային այդ կազմակերպություններին (խմբակներին, ընկերություններին, ասոցիացիաներին և այլն) փոխվել դառնալ «բաժիններ», «սեկտորներ», «գեպարտամենտներ» վսրև ապարատների: Այդ հասարակական միավորումները պետք է ստեղծել ցածից. հարկավոր է, վորպեսզի մարդիկ համախմբվեն այն գործի գծով, վոր նրանք գիտեն, վորը նրանք սիրում են, վորի խնդիրների վրա նրանք աշխատում են: Հարկավոր է, վորպեսզի այդ լինի տեխնիկական հասարակայնություն, այսինքն, վորպեսզի կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականությունն այստեղ գտնի իր տեխնիկական համարժեքը (եկվիվալենտը): Անհրաժեշտ է, վորպեսզի այստեղ քրննարկվեն — թեկուզ տաք ու կրքոտ կերպով — տեխնիկական հարցերը, սկսած գործարանային կամ ցեխային կարգի խնդրից մինչև ամբողջ յերկրի տեխնիկական վերակառուցման ընդհանուր խնդիրները: Կուսակցության ղեկավարությունը, — վորն է և կլինի մեր յերկրում տեղի ունեցող ամեն մի մասսայական հեղափոխական գործողության հիմնական և ամենահզոր լծակը, պետք է ավելի համարձակ և վճռականորեն ստեղծել կենդանի խմբակներ (клубы), խմբեր, բրիգադներ այն ընկերներին, վորոնք իսկապես հետաքրքրվում են տվյալ գործով և վորոնք սիրում են այն. ընդամեն, ծաղոզ և կազմակերպվող այդ խմբակների, խմբերի և բրիգադների նկատմամբ պետք է պահանջվի լիակատար ու անսահմանափակ կամավորություն սկզբունքը: Հասկանալի չէ, վոր խմբակների մեծամասնությունն անմիջականորեն կապված կլինի տվյալ գործարանի խնդիրների հետ: Սակայն նրանք կարող են համախմբվել և՛ ըստ առանձին, իրենց հետաքրքրող խնդիրների, և՛ ըստ խնդիրների ամբողջ ճյուղերի, և՛ ըստ ընդհանուր խնդիրների. գյուտարարները, ռացիոնալիզատորները, տեխնիկային տիրապետելու բրիգադները, բրիգադիրները, ֆիզիկա սիրողները, Կուզբասի խնդիրներով հետաքրքրվողները, տեխնիկական թղթակիցները, և այլն, կարող են միանալ կազմել խմբեր, խմբակներ, ասոցիացիաներ: Նրանց համար ավելի նպատակահարմար է համախմբվել տեխնիկական լրագրերի (տեխնիկական պատի լրագրերի, շրջանային տեխնիկական կենտրոնական տեխնիկական) և տեխ-

նիկական ամսագրերի, ժուրնալների շուրջը, համախմբվելով կազմել ասոցիացիաներ կամ ընկերություններ ըստ մասնագիտությունների և միաժամանակ ունենալով կապ միմյանց միջև: Գիտական տեխնիկական ընկերությունները պետք է լինեն իրապես գիտական-տեխնիկական ընկերություններ և վոչ թեթև պրոպագանդի դասընթացներ: Իրենց գլխավոր խնդիրը նրանք պետք է համարեն՝ ճիշտ փորձումների մշակումը մի ամբողջ շարք գիտական-տեխնիկական պրոբլեմների վերաբերմամբ, գիտական-տեխնիկական բնույթի հարցերի դրույթ, ինժեներա-տեխնիկական փորձի փոխանակումը, սխտեմատիկ ինֆորմացիան արտասահմանյան նվաճումների մասին և այլն: Բոլորովին սխալ է այն կարծիքը, թե իբր գիտական-տեխնիկական ընկերությունների դարն անցել է. ընդհակառակը, նրանք մեծ ապագա ունեն, յեթե նրանք կարողանան դառնալ գիտական-տեխնիկական մտքի կենդանի բջիջներ: Այդ ընկերությունները պետք է դառնան, առաջին հերթին, մտածողական լաբորատորիաներ, վորոնք պետք է արտագրեն տեխնիկական և գիտական նոր գաղափարներ և մտածեն խորհն սրանց անմիջական գործնական կիրարկման վրա: Այդ ընկերությունները պետք է լինեն յուրահատուկ դպրոց, վորը կբարձրացնի մեր ճարտարագետների, տեխնիկների և գիտական աշխատավորների վորակավորումը: Անշուշտ, նրանք ամենասերտ կապը պետք է պահպանեն բանվորական տեխնիկական ակտիվի հետ, նրանք պետք է հանդես գան նաև վորպես դասախոսներ, հրահանգիչներ, բրոշյուրների, գրքերի հեղինակներ, հայթայթողներ և այլն և այլն: Սակայն դա որակարգից չպետք է հանի նրանց համար կենտրոնական հանդիսացող նրանց հատուկ խնդիրը, այն է՝ բարձրացնելով իրենց վորակավորումը, դնել տեխնիկական և գիտական նոր պրոբլեմներ, քննարկել նրանց, գիտելու թանալ նրանց շուրջը, գտնել վորոշումներ, ոգնել կյանքի մեջ մտցնելու նրանց: Այդ ընկերությունները պետք է՝ համեմատաբար բարձր մակարդակի վրա՝ մոտեցնեն պրոֆեսոր-մանկավարժին, գիտնական-հետազոտողին (գիտական աշխատավորին), գործարանային ճարտարագետին, դրանով իսկ նպաստելով թեորիայի և պրակտիկայի մերձեցմանը: Նման ընկերությունների կազմակերպման և գործունեությունից գործում հսկայական դեր պետք է խաղան գիտական-տեխնիկական ժուրնալները, վորոնք պետք է բարձրացվեն համապատասխան բարձրության աստիճանի: Ընդ սմին, բանվորական տեխնիկական ակտիվի ու ինժեներական-գիտական հասարակայնություն միջև կապ հաստատելը հերթական խնդիրներից մեկը պետք է դառնա: Բոլոր այս խնդիրներին լուծում տալը նշանակում է՝ գործողություն մեջ դնել հսկայական կենդանի մի ուժ, վորը բացառիկ խո-

շոր՝ դեր կխաղա մեր տեխնիկական կուլտուրայի բարձրացման գործում: Տեխնիկական հասարակայնությունից դարգացումը կլինի տեխնիկական պրոպագանդի վողջ հսկայական գործի կարևորագույն լծակը:

6. ԱՐՏԱԳՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տեխնիկական պրոպագանդի թուլությունը և միջոցների անբավարարությունը, վորպիսին առայժմ մենք ունենք, ամենևին չի նշանակում, թե այդ աշխատանքը չի կարելի ամենամոտիկ ժամանակում ծավալել, կամ, թե պետք է «սպասել», մինչև վոր ամեն ինչ մենք կունենանք: Վորոշ ժամանակ մենք դեռևս դուրի կլինենք տեխնիկական ֆիլմից: Այդ պետք է ստեղծել: Տակավին չի լինի տեխնիկական գրքի, բրոշյուրների բավարար ֆոնդ, տակավին չի լինի ուսուցման ոժանդակների (ձեռնարկների) բավարար քանակություն: Այդ «նեղ տեղերը» հարկավոր է հաղթահարել: Սակայն աշխատանքը պետք է սկսել անհապաղ և ծավալել սխտեմատիկ ու անշեղ կերպով:

Տեխնիկական պրոպագանդի հենակետը պետք է դառնան գիտական-հետազոտական ինստիտուտները, բուհերը և արտադրությունից ալվալ ճյուղի առաջավոր «ղեկավար» գործարանները: Այս յեղք ուժերի կոմբինացիան, վորտեղ կենտրոնացված է բոլոր լավագույնը, ինչ մենք ունենք մեր տեխնիկական, բնագիտական և տեխնիկական-մանկավարժական կադրերից,՝ մեզ համար ապահովում է, վոր տեխնիկական պրոպագանդի գործում բավականաչափ լիակատարություն հաղի կառնվեն բոլոր անհրաժեշտ մոմենտները.՝ և այն, ինչ վոր աճում է անմիջականորեն արտադրությունից պահանջներից, և այն, ինչ վոր հանդիսանում է վճռական տեխ-մանկավարժական տեսակետից: Այդ ուժերի կոմբինացիան,՝ վորն իր մեջ է առնում արհմիությունների ներկայացուցչությունը և կուսակցության ընդհանուր ղեկավարությունը,՝ հանդիսանում է տեխնիկական պրոպագանդի հիմնական հենակետային բաղան: Այդ ուժերի կոմբինացիան ապահովում է նաև համապատասխան մեթոդիկայի գիտակ մշակումը: Արտասահմանյան պրակտիկան և, առաջին հերթին, ամերիկյան պրակտիկան, ցույց է տալիս, թե տեխնիկական պրոպագանդի գործում ինչպիսի հսկայական դեր են խաղում հետազոտական ինստիտուտները և բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատությունները: Կոմբինատը (բուհ, ինստիտուտ և որինակելի ձեռնարկություն) պետք է լինի հենակետային բաղաթե տեխնիկական գրականություն ստեղծելու համար՝ ըստ արտադրությունից ճյուղերի, թե տեխնիկական կինո ստեղծելու համար,

վորը հաշվի պետք է առնի արտադրութեան մասնագիտացված ճյուղերի պահանջները, թե տեխնիկական պրոպագանդ կազմակերպելու համար ռադիոյով: Կոնկրետ այդ նշանակում է, որինակ, վոր գիտական-տեխնիկական գրականութուն ստեղծելու աշխատանքը պետք է ապակենտրոնացվի: Մի կենտրոնի փոխարեն,—վորը «պատրաստում էր» (կամ, ավելի ճիշտ, յերևակայում էր, թե պատրաստում է) բոլոր գրքերն ու բրոշյուրները և լույս էր ընծայում,—պետք է ստեղծվեն խմբագրական բազաներ մասնագիտացված միավորումներին կից: Այդ խմբագրական բազաները, վորոնք ստեղծվելու յեն գիտական-հետազոտական ինստիտուտի, բոհոհի և արդյունաբերութեան տվյալ ճյուղի առաջատար ձեռնարկութեան ներկայացուցիչներին,—պետք է կազմեն տեխնիկական գրականութեան հրատարակչութեան պլանները, ընտրեն համապատասխան հեղինակներ, խմբագրեն միշտք համապատասխան հրատարակութուններ, առաջին հերթին մասնագիտացված ժուրնալներ և անմիջականորեն պատասխանատու գլխեն նրանց բովանդակչութեան ու վորակի համար: Նրանք վրենք ն գործ ունենում ապարանների հետ, իրենք են հետևում հրատարակվող գրականութեան՝ ժամկետին լույս տեսնելուն և այլն: ԺՏԳԽ գիտական-տեխնիկական հրատարակչութեան վերնախավին պետք է թողնվեն ընդհանուր պլանային և կարգավորող ֆունկցիաները (հավաքական պլաններ կազմելը, ստորին խմբերի պլանների հաստատումը և այլն), դրան ավելացրած և այլն, վոր նա պետք է վարի ֆունդամենտալ գրականութունը և նրա միջանի հատուկ տեսակները:

Ուժերի այդ կոմբինացիան հենակետ պետք է լինի և՛ տեխնիկական պրոպագանդի մյուս կարևորագույն լծակների (կինո, ռադիո, առարկայական ոժանդակներ և այլն) կազմակերպման դեպքում, ըստ վորում, հասկանալի յե, պետք է ուշադրութեան առնվեն տեխնիկական պրոպագանդի այդ տեսակների առանձնահատկութունները:

Տեխնիկական հասարակայնութեան հակայական նշանակութեան մասին մենք խոսեցինք վերևում: Այժմ խոսենք տեխնիկական պրոպագանդի մյուս կարևորագույն լծակների (կինո, ռադիո, առարկայական ոժանդակներ և այլն) կազմակերպման դեպքում, ըստ վորում, հասկանալի յե, պետք է ուշադրութեան առնվեն տեխնիկական պրոպագանդի այդ տեսակների առանձնահատկութունները: Ցածում—գործարանում—դա արտադրական խորհրդակցութունների և տեխնիկական պրոպագանդի գծով գործարանի դիրեկտորի ոգնականն է, վորն անմիջականորեն յենթարկվում է՝ միավորմանը կամ տրեստին կից կազմակերպվող արտադրական-տեխնիկական պրոպագանդի խմբին կամ սեկտորին: Սրանք ել, իրենց հերթին, յենթարկվում են ՍՍՀՄ ԺՏԳԽ սեկտորին: Այդ ապարատը, սակայն, հատուկ տիպի ապարատ է: Նա պետք է ունենա և՛ պլանավորող և՛ ոպե-

րատիվ ֆունկցիաներ, սակայն, ամենից առաջ, նա պետք է կարողանա զուգորդել այդ աշխատանքը տեխնիկական հասարակայնութեան ոգնութուն և ամեն տեսակ աջակցութուն ցույց տալու աշխատանքի հետ: Տեխնիկական պրոպագանդի կազմակերպման ապարատի ստեղծումն ամենևին չի նշանակում, վոր այդ ապարատն ամեն բան պետք է անի բոլորի փոխարեն: Այստեղ հարկավոր է դերերի ճիշտ բաշխում: Արդյունաբերութեան ապարատը ղեկավարում, պլանավորում, կազմակերպում է աշխատանքն, ամենևին չփոխարինելով վո՛չ հասարակայնութեանը և վո՛չ ել տեխնիկական պրոպագանդ մղող մյուս կազմակերպութուններին: Վորպես կապի միջոց ԺՏԳԽ-ի, տեխնիկական հասարակայնութեան, այլ գերատեսչութունների միջև պետք է լինի արտադրական-տեխնիկական պրոպագանդի խորհուրդը ԺՏԳԽ-ի սեկտորին կից, խորհրդի, վորի կազմում պետք է ապահովվի բոլոր կարևորագույն շահագրգռված կազմակերպութունների ներկայացուցչութունը (լուս-ժողովում ընկ. Ա. Բուբնովի առաջարկը):

Վորոնք են սեկտորի հիմնական լծակները: Կուսակցութեան կենտրոնական Կոմիտեյի վորոշմամբ ԺՏԳԽ-ի իրավասութեանն է հանձնված պետական գիտական-տեխնիկական հրատարակչութունը: Պետք է ստեղծվի տեխնիկական ֆիլմի արտադրութեան հատուկ կենտրոն և առարկայական ոժանդակների (ձեռնարկներին) արտադրութեան կենտրոն: ԺՏԳԽ-ի տեխպրոպագանդի սեկտորը ժապում է նաև տեխնիկական պրոպագանդի նպատակների համար ռադիոյն լավագույն յեղանակներով ոգտագործելու հարցը: Բացի դրանից, ԺՏԳԽ-ին կից ստեղծվում է ինֆորմացիոն-բիբլիոգրաֆիական բյուրո, վորը պետք է ծավալի իր բժշկներն ստորին ողակներում: Ստեղծվելու յենաև տեխնիկական կոնսուլտացիայի կազմակերպման բյուրո, վորի գլխավոր անելիքը պետք է լինի տեխնիկական կոնսուլտացիոն բժշկների ստեղծումը ձեռնարկութուններում: Անհրաժեշտ կլինի ստեղծել միշտք ոժանդակ կազմակերպութուններ այնպիսի տիպի, ինչպես, որինակ, յերեխաների շրջանում պրոպագանդ մղելու խումբ, դանադան տեսակի մեթոդական խորհուրդներ և այլն: Վերջապես, կարևորագույն լծակ պետք է դառնան առաջին՝ մասնագիտական տեխնիկական լրագիրը, վորը կլինի վճռական ուժ տեխնիկական թղթակիցների լայն ցանց կազմակերպելու գործում և այլն. նաև նա կարող է դառնալ մասսաների տեխնիկական մրցակցութուն կազմակերպող կենտրոն. յերկրորդ՝ ղեկավար գիտական-տեխնիկական ժուրնալը:

Հանրապետական և յերկրային ԺՏԳԽ-ներին կից պետք է ստեղծվեն արտադրական-տեխնիկական պրոպագանդի համապատասխան սեկտորներ: Նրանց գլխավոր լծակները—դրանք խմբագրական բազա-

ներն են, կինոսենյակներն են բտուհերում կամ ինստիտուտներում և այլն:

Ստորին ողակի վրա — արտադրական խորհրդակցություններն են արտադրական տեխնիկական պրոպագանդի գործարանի գծով գործարանի գիրքի տորի ոգնակալի վրա — ներկայումս գրված են նոր խնդիրներ: Հատկապես այդ ողակում կարևոր է, առաջին հերթին, հասնել այն բանին, վոր պետքի հմտորեն միմյանց գուգորդվեն ուղերատիվ աշխատանքը և տեխնիկական հասարակայնության կազմակերպման ու ստեղծման աշխատանքը: Ամեն կերպ աջակցել տեխնիկական հասարակայնության աճմանը, պահել պաշտպանել նրան բյուրոկրատացումից, սիստեմատիկորեն սգնել նրան — ահավասիկ արտադրական տեխնիկական պրոպագանդի ապարատի ստորին ողակի ամենաառաջին պարտականությունը:

Վոչ պակաս կարևոր խնդիր է հանդիսանում տեխնիկական ակտիվի ընտրությունը: Յուրաքանչյուր գործարանում հարվածաշինների շրջանում, առաջին հերթին ռացիոնալիզատորների, գյուտարարների շրջանում, կոմյերիտականների, առաջավոր յերիտասարդ և հասակավոր ճարտարագետների ու տեխնիկների շրջանում կան կայքեր, վորոնք հանձն կառնեն տեխնիկական պրոպագանդ կազմակերպելու ու մղելու գործը: Այդ ակտիվի ստեղծումը կարևորագույն նախադրյալն է գործարանում կատարելիք ամբողջ աշխատանքի: Սակայն հարկավոր է հենց սկզբից եեթ նախազգուշացնել, վորպեսզի գործը չհանգի միայն ու միայն «տեխնիկական պրոպագանդի անհրաժեշտության պրոպագանդին»: Անհրաժեշտ է ըստ հարավորին արագ անցնել անմիջական գործին, այսինքն վորոշել, թե ինչ պետք է, առաջին հերթին, պրոպագանդ անել տվյալ գործարանում, ով պետք է պրոպագանդ մղի, ինչպես ու ինչ ձևերով պետք է մղվի այդ պրոպագանդը, և սկսել բուն աշխատանքն ըստ իր նյութական եյության:

Այդ աշխատանքի ուղղությունը և բովանդակությունը կախված է, առաջին հերթին, հենց գործարանի կերպարանքից և տվյալ գործարանում գոյութուն ունեցող իրերի կոնկրետ գրությունից: Առավել կարևոր կետերը պետք է լինեն. — մշակել և պարզաբանել մասնագետների ոգնությամբ՝ գործարանային տեխպլանի հիմնական ձևերն ու հիմնական ցուցանիշները, պարզել գործարանի ցավոտ կետերը (ձեղքվածք, թերակատարում, խոտան, վատ վորակ և այլն) ու նրանց պատճառները. հարմարեցնել տեխպրոպագանդն այդ ցավոտ կետերի վերացմանը (արտադրանքի, նյութերի, տեխնոլոգիական պրոցեսների վորակի վերլուծություն, «բուժման» մեթոդների ցուցադրում, տվյալ բնույթի որինակելի տեխնիկական աշխատանքի ցուցադրում

և այլն). պրոպագանդ մղել արտադրության տվյալ միջոցներին ծանոթանալու համար, պրոպագանդ մղել բոլոր հնարավոր տեխնիկական բարելավումների մասին, ինֆորմացիա տալ այդ գործում գոյութուն ունեցող նորույթների մասին և այլն և այլն: Դրան գուգընթաց, գործարանի տեխնիկական ակտիվը, տեխպրոպագանդի դերեկտորի ոգնակալի գլխավորությամբ, պետք է սովորի հայտաբերել առանձին բանվորների և բանվորների խմբերի տեխնիկական պահանջներն ու շահերը: Դրա հիման վրա անհրաժեշտ է հմտորեն ոգնել այդ պահանջներին համապատասխանող ամեն տեսակ խմբակներ և այլ կազմակերպություններ հիմնելու: Այսպիսի ձեռնարկումներ, ինչպես, որինակ, նոր բանվորների սպասարկումը, նրանց՝ արտադրությանը, այն մեքենաներին և աղբեգատներին ծանոթացնելը, վորոնց պայմաններում նոր բանվորները պետք է աշխատեն, վորակավորման բարձրացման ամեն տեսակ խմբակների ստեղծումը — արտադրության մեջ նկատվող այս կամ այն տեխնիկական թույլ կողմերի առնչությամբ և այլն և այլն, — այս ամենը կպահանջեն ինչպես հարկն է գիտնալ տվյալ արտադրության բոլոր կողմերը և նրա տեխնիկական պրորբնեները: Այս գործում չի հաջողվի ամեն ինչ նախապես նշել, ուստի այստեղ հարկավոր է, ընդհանրապես ասած, մեծագույն շարժունություն (мобильность):

Տեխարդֆինպլանի շուրջը ծավալվող տեխնիկական պրոպագանդի աշխատանքը պետք է ֆիքսացիայի յենթարկվի արտադրական խորհրդակցություններում, վորտեղ տեխնիկական ակտիվը բարձրացնում է այդ խորհրդակցությունները շատ ավելի բարձր և տեխնիկապես շատ ավելի գործարար աստիճանի:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել տեխնիկական պրոպագանդի սպասարկման բոլոր նյութական կետերը գործարանում: Այդպիսի կետերից մեկը պետք է դառնա ցեխային և գործարանային լաբորատորիան: Դժբախտաբար այդ լաբորատորիաները, մեծ մասամբ, իրենց գոյությունն առայժմ մի կերպ քարշ են տալիս: Սա ամենացավոտ խնդիրներից մեկն է մեր գործարանային կյանքում: Հարկավոր է, այդ պատճառով, ամեն կերպ ամրացնել գործարանային լաբորատորիաները և աստիճանաբար նրանց դարձնել տեխնիկական պրոպագանդի բազա գործարանում, ամենասերտ կերպով կապելով նրանց գիտական-հետազոտական ինստիտուտների և բուհերի հետ: Բոլորովին նոր խնդիրներ են ծառանում գործարանային տեխնիկական գրադարանների առջև: Տեխնիկական պրոպագանդի համար անհրաժեշտ է նաև ոգտագործել ակումբները, ստեղծել հատուկ ուսուցման արհեստանոցներ, ցուցահանդեսներ, կինոսենյակներ, տեխնիկական ռադիո-հանգույցներ և այլն: Այդպիսով, տեխնիկային տիրապետելու վերաբերյալ կուսակցության

լողունգը, վորը ձևակերպված է ընկ. Ս տ ա լ ի ն ի կողմից, ստանում է բաղա իր իրացման համար:

Յ Ե Ձ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Մենք ապրում ենք միանգամայն բացառիկ ժամանակում: Կապիտալիստական աշխարհը, վորը դեռևս ուժեղ է, դատապարտված է մահվան և գալարվում է ճգնաժամի ճիրաններում: Նրա աշխարհահայացքը ցայտուն կերպով ձևակերպել է Շ պ ե ն դ լ ե բ ը, վորը, ի դեպ է ասել, աշխարհում ամենից բարձր է դասում, և այն ել բացառիկ ցինիզմով, «գիշատիչ կենդանու» առաքինություններն ու պատերազմի, բռնություն, խաբերություն մեջ տեսնում է առավել «մարդկային հատկություններ»: Յեվ ահա, իր գրքի վերջում նա շարադրում է այսպիսի տապանազիր կապիտալիզմին.

«Մենք ծնվել ենք այս ժամանակ և քաջությունը պետք է անցնենք մեր ուղին մինչև վերջը, այն ուղին, վորը մեզ համար նախասահմանված է: Կորցրած դիրքում կանգնել առանց հույսի, առանց վերահաս փրկություն— դա մեր պարտականությունն է: Տոկալ դիմանալ, ինչպես այն հոռեական գիշերը, վորի վտակը բերնից գտել են Պոմպեյի դռների առջև, վորը մահացել է, վորովհետև վեզովի ժայթքման սկզբին նրան մոռացել էին վերցնել պահակությունից: Դրանում է վեհությունը: Դա նշանակում է ունենալ ցեղի բարեմասնությունը: Այդ պատվովոր վախճանը այն միակ բանն է, ինչ վոր չի կարելի խլել մարդուց»:

Բուրժուական յեղուղակություն այդ փրկության չի սխալվում: Հեղափոխական վեզովը վերջ կտա կապիտալիստական գիշատչությունը: Իսկ մինչ հին աշխարհը գալարվում կծկվում է իր դրություն անելանելիության գիտակցությունից, ԽՍՀՄ բանվոր դասակարգը մեծագույն հերոսությունը, իր յերկաթե կուսակցության կանչով, միաձույլ Լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ առաջ կընթանա, կապիտալիզմի մնացորդների դեմ մղվող դասակարգային պայքարում ձեռք բերված հաղթանակներից հետո, դեպի սոցիալիստական տեխնիկական հեղափոխություն նոր վիթարի հաղթություն:

ՀԳ. Այս գեկուցման մեջ գլխավոր ուշադրությունը բեկումն է սոցիալիստական հեղափոխության տեխնիկական կողմի վրա՝ թեմայի հետևանքով: Ինքնին հասկանալի չէ, վոր սա բնավ չպետք է նշանակի պրոլետարիատի դասակարգային պայքարի վորևէ թերագնահատում: Չկա բնություն մեջ գուտ, մեկուսացած տեխնիկա և յերկրի տեխնիկական վերասարքավորումը մեղնում կոմունիստական պրոլետարիատի մեծ դասակարգային պայքարի արտահայտությունն է, նա հսկայական մի պրոցես է, վորն ունի քաղաքական նշանակություն և վորին ուղեկցում է լարված դասակարգային

պայքարը նաև այլ ձևերով: Իդուր չէ, վոր բովանդակ պրոցեսն իր ամբողջությամբ ընթանում է կուսակցության և նրա Կենտկոմի ղեկավարությամբ: Այս խնդիրը կուսակցությունը վճռում է նախապես հաղթություն տանելով դիմադրություն ցույց տվող կապիտալիստական տարրերի դեմ:

Պատմությունը ցույց տվեց, վոր կուսակցությունն ու նրա Կենտկոմն ամբողջովին ճիշտ դուրս յեկան նաև թեքումների դեմ մղվող պայքարում, ի թիվս վորոնց աջ թեքման դեմ մղվող պայքարում: Պատմականորեն այդ պայքարն արդարացված է: Կուսակցություն իր ուսերին է դնում նոր խնդիրներ, պատրաստում է նոր հաղթանակներ:

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՍԻՆ

ՋԵԿՈՒՅԱԳԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՅԵՎ ՆՐԱ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յերկրի սոցիալիստական վերակառուցման ներկա ժամանակում շինարարությունը թափը սահմանափակող կարևորագույն գործոններից մեկն է հանդիսանում ցած մակարդակը, իսկ յերբեմն ել կատարյալ պակասությունը վերահսկյալ մարդկային կադրերի (վորակյալ բանվոր, միջին տեխնիկական անձնակազմ, լաբորատորային և գիտական-հետազոտական աշխատավորներ, բարձրագույն տեխնիկական անձնակազմ և այլն): Սպառնալից է դառնում այն յեղքը, վորը գոյություն ունի մի կողմից՝ յերկրի աճող պահանջների ու մինչև իսկ նոր մեքենայական ու ապարատային սարքավորման ամբողջություն և մյուս կողմից՝ առկա բանվորական ուժերի միջև: Չափազանց ընտրոշ է այդ տեսակետից Դոնբասի որինակը: Անգրագետների տոկոսը (ըստ ՀԱՄԿՍ-ի 1929 թ. վիճակագրության տվյալների) Լեհինգրադի և Մոսկվայի մետաղամշակման ու մեքենաշինական արդյունաբերության բանվորների ընդհանուր կազմում հավասար է 3—3 և կեսի, Ուրալում—14-ի, իսկ Դոնբասում այդ տոկոսը բարձրանում է մինչև 15-ի: Մոսկվայի ՀԱՄԿՍ-ի վիճակագրության (1929 թ. վերջում) տվյալների համաձայն, Մոսկվայի մարզի մետաղագործների 75,5 տոկոսն ունի վոշ ավելի քան 4 դասարանի կրթություն: Յեթե այստեղ խոսքը վերաբերում է տարրական անգրագիտությանը, ապա ուրեմն ավելի ևս խիստ կերպով է նկատվում նույն յերևույթը, վորչափով մենք խոսում ենք տեխնիկական անգրագիտության մասին, վորը վճռական կոնֆլիկտի մեջ է մտնում ԽՍՀՄ ելեկտրիֆիկացիայի, մեքենայացման և քիմիացման խնդիրներին հետ: Այդ տեխնիկական անգրագիտությունը վերացնել անհրաժեշտ է ամեն կողմից և ամեն հնարավոր միջոցներով. թե՛ ընդհանուր կրթության սխառմով, թե՛ տեխնիկական դպրոցների ամբողջ սխառմով, թե՛ հեռակա ուսուցման մեթոդներով (վորը բացառիկ հսկայական չափեր է ստացել այնպիսի յերկրներում, ինչպես՝ Ֆրանսիայում, Միացյալ Նա-

հանգներում) և թե՛ զանազան տեսակ տեխնիկական պրոպագանդով:

Այդպիսով, տեխնիկական պրոպագանդի խնդիրները հետևվյալն են.

1. Բանվոր դասակարգի լայն մասսաների և, առաջին հերթին, նոր բանվորների տարրական ու տեխնիկական անգրագիտությունը վերացումը. վորոշ «տեխնոմիխոմի» ստեղծումը՝ նման «աղբամինի» մոմին:

2. Սովորած բանվորների արտադրական-տեխնիկական վորակավորման բարձրացումը և նրանց տեխնիկայի նորագույն նվաճումներով սխառմատիրոհներն զինումը:

3. Միջին տեխնիկական անձնակազմի (վարպետ, միջակ տեխնիկ) արտադրական-տեխնիկական վորակավորման բարձրացումը:

4. Արդյունաբերության ինժեներական կազմի և նրա վարչատնտեսական կազմի արտադրական տեխնիկական վորակավորման բարձրացումը:

Սա իր հերթին հետապնդում է հետևյալ նպատակները.

1) պայքար տեխնիկական ճեղքվածքների վերացման համար.

2) պայքար ընթացիկ արդիֆինպլանի կատարման համար, հատկապես նոր գործարանների շինարարության գծով.

3) պայքար հեռանկարային տեխնիկատնտեսական պլանների կատարման համար:

Այս հիմնական նպատակներին պետք է հարմարեցվի տեխնիկական պրոպագանդի ամբողջ սխառմը:

Վերոհիշյալից բխում են, մոտավորապես, հետևյալ ավելի մասնավոր խնդիրները.

Ա. ՃԱՆՈՒԹԱԳՐԱՅ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԼԱՅՆ ԽԱՎԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ա) ծանոթացում ԽՍՀՄ տեխնիկական վերակառուցման ընդհանուր խնդիրներին.

բ) այդ վերակառուցման կապը պրոլետարիատի սոցիալ-դասակարգային խնդիրների հետ.

գ) ծանոթացում ժամանակակից մեքենաների և ապարատների նոր տիպերին.

դ) ծանոթացում (տեխնիկական կողմից) Միությունը բնական հարստությունների հիմնական հատկություններին.

յե) ծանոթացում «առաջավոր» կապիտալիստական յերկրների տեխնիկային (սև և ինչին մենք պետք է «հասնենք ու անցնենք»).

զ) ծանոթացում աշխատանքի կազմակերպման, կալկուլյացիայի և այլն տարրական հարցերին:

Հիմնական դիրքավորումն այստեղ պետք է լինի՝ հաղթահարել մանր-բուրժուական և գյուղական բարբարոսությունը, դաստիարակել ներշնչել սոցիալիստական վերաբերմունք դեպի մեքենան և արտադրության մյուս միջոցները, արմատացնել սոցիալիստական վերակառուցման գաղափարը, ըստ վորում վորպես նախապայման հարկավոր է հասկանալ տեխնիկայի, եկոնոմիկայի, պրոլետարիատի դասակարգային խնդիրների միջև գոյություն ունեցող կապը և, վերջապես, ծանոթացնել առավել առաջավոր տեխնիկայի հիմնական նվաճումներին:

Բ. ՎՈՐԱԳՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

ա) բացի ժամանակակից տեխնիկայի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներից, մանրամասն ծանոթացում արտադրության տվյալ մասնագիտացված ճյուղի տեխնիկային.

բ) սխտեմատիկ ծանոթացում արտադրության տվյալ ճյուղում կատարվող ընթացիկ նորմոլոգիաներին (նոր տեսակի հումք, նոր տեխնոլոգիական պրոցեսներ, մեքենաներ, ապարատներ և այլն).

գ) ծանոթացում համապատասխան տեխնիկական և տնտեսական հաշվարկումներին սխտեմին.

դ) սխտեմատիկ վերավորակափորում հին գիտելիքները թարմացնելու և նորերը ձեռք բերելու միջոցով.

յե) տեխնիկական-արտադրական փորձի լայն փոխանակություն միատեսակ ձեռնարկությունների և ըստ արտադրության հարակից ձեռնարկությունների միջև:

Հիմնական դիրքավորումն այստեղ պետք է լինի հետևյալը. յերկրի տեխնիկական վերակառուցման խնդիրները և այդ վերակառուցման սոցիալիստական իմաստը լիովին հասկանալու հիման վրա վորակավորման արագ բարձրացում տվյալ արտադրական ճյուղում՝ տեխնիկական մտահորիզոնի ընդհանուր լայնացման պայմաններում:

Գ. ՄԻՋԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

ա) այդ անձնակազմի, ըստ հնարավորին, ավելի արագ ստեղծումը տեխնիկական պրոպագանդի բոլոր միջոցների ոգնությունը, պրոպագանդի, վորը պետք է ծառայի վորպես լրացում՝ սխտեմատիկ դպրոցական ուսուցմանը.

բ) մանրամասն ծանոթացում տվյալ մասնագիտացված տեխնիկատնտեսական պրոցեսին.

գ) սխտեմատիկ ծանոթացում տեխնիկական նորմոլոգիաներին.

դ) ծանոթացում աշխատանքի կազմակերպման ձևերին և նրանց տեխնիկական և տնտեսական հետևանքներին.

յե) տեխնիկական և կազմակերպական փորձի լայն փոխանա-

կում ինչպես միատեսակ ձեռնարկությունների միջև, նույնպես և տարբեր արտադրական ճյուղերի միջև.

զ) ծանոթացում կալկուլյացիայի առավել կատարյալ ձևերին.

ե) ծանոթացում մեքենայական հաշվային և հաշվարկային գործիքներին.

ը) փորձի լայն փոխանակություն՝ աշխատանքի վարձատրություն, բանվորների առաջարկների ոգտագործման, արտադրական խորհրդակցությունների պրակտիկայի հարցերի վերաբերմամբ և այլն և այլն:

Դ. ՎՈՐԱԳՅԱՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ԻՆՓԵՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

ա) ծանոթացում, լիովին տիրապետելու նպատակով, տեխնիկայի ժամանակակից դրությունն ընդհանրապես և արտադրության տվյալ ճյուղի տեխնիկային մասնավորապես ու հատկապես գործի ինչպես թեորոտիկ, նույնպես և գործնական տեսակետից.

բ) ծանոթացում սահմանամերձ դիսցիպլինաներին և բնագավառներին (սահմանակից արտադրական բնագավառներ, տնտեսա-եկոնոմիկական պրոլոգիաներ, տեխնիկական և տնտեսական պլանավորման ու համապատասխան կոնկրետ պլանների հարցեր, գիտական-հետազոտական բնույթի հարցեր).

գ) ծանոթացում արտասահմանյան և խորհրդային գիտություն ու տեխնիկայի բոլոր այն նորություններին, վորոնք կապված են տվյալ արտադրական ճյուղի հետ.

դ) գիտելիքների սխտեմատիկ աշխուժացում և նորոգում ինչպես ընդհանուր դիսցիպլինաներում, նույնպես և առանձնապես այն դիսցիպլինաներում, վորոնք կապված են արտադրության տվյալ տեսակետի հետ.

յե) արտադրական-տեխնիկական բնույթի խնդիրների կապակցումը ԽՍՀՄ սոցիալիստական վերակառուցման ընդհանուր խնդիրներին հետ:

Հիմնական դիրքավորումն այստեղ պետք է լինի՝ ուղղություն բռնել դեպի բարձր ձեռնհասություն ունեցող մասնագետ-ծարտարագետ և տնտեսավարը, վորոնք, հիանալի ծանոթ լինելով արտադրություն տվյալ ճյուղին, ունենան բավականաչափ լայն հորիզոն ու հետևելով գիտություն և տեխնիկայի բոլոր նորություններին, կարողանան շարժապել իրենց տեխնիկական խնդիրները ԽՍՀՄ տեխնիկական-տնտեսական վերակառուցման ընդհանուր պլանների հետ:

ՅԵ. ՆՈՐ ՄԵՐՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ, ՀԱՏՈՒԿ ԽՆԴԻՐՆԵՐ

Անհրաժեշտ է ներկայումս մտածել նաև ԽՍՀՄ հաջորդ սերունդների մասին նրանց աշխատանքային վորակավորման տեսակետից:

ինչպես Միացյալ Նահանգներ (դպրոց) և Գերմանիայի (դպրոց, մասնագիտական կադմակերպություններ, ինչպես այսպես կոչված «Դին-տա»-ն) փորձը ցույց է տալիս, յերկսաների համապատասխան դաստիարակությունը (մինչև իսկ նախադպրոցական շրջանի) հսկայական դեր է խաղում վերադաս պատվան դասն ամբողջ հետագա տեխնիկական դաստիարակություն և կրթության համար: Տեխնիկական չափազանց անգրագիտություն մեր պայմաններում այդ ողակը վոչ մի դեպքում չի կարելի անուշադրություն մատնել: Ընդհակառակը, յերկսանով մեր հասարակական կյանքի ամբողջ վոճի փոփոխություն մասին ունեցած պարզորոշ պրոգնոզից, անհրաժեշտ է նախապես կողմորոշել մեր աճող սերնդին դեպի բնագիտական և տեխնիկական գիտելիքները, միացված հասարակական վերակառուցման, կենցաղի կոլեկտիվացման և սոցիալիստական տնտեսություն պլանային կառուցվածքի խնդիրներին: Բոլոր այս հարցերի վերաբերմամբ հետաքրքրություն դարձեցնելը, հարցասիրություն, ուսման սեր, ստեղծագործություն և գյուտարարություն վոզի ներշնչել-դաստիարակելը պետք է կազմեն տեխնիկական պրոպագանդի հիմքը, այն պրոպագանդի, վորը վերաբերում է խՍՀՄ բնակչության առավել յերիտասարդ հասակին:

2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Նկատի առնելով աշխատավորների տեխնիկական վորակավորման բարձրացման ամբողջ պրոցեսն արագացնելու չափազանց անհրաժեշտությունը, հարկավոր է աշխատանքը կատարել՝ 1) ըստ հնարավորին ալելի պլանաչափ կերպով, 2) միանգամից մասսայական մասշտաբով, 3) ողտագործելով պրոպագանդի տեխնիկայի ասպարեզում գոյություն ունեցող բոլոր նորագույն նվաճումները (ռադիո, կինո և այլն), 4) չխնայելով միջոցները նյութական նախադրյալներ ստեղծելու տեխնիկական պրոպագանդի ամբողջ գործն ինչպես հարկն է դնելու համար: Միայն այդ դեպքում մենք կունենանք խորհրդային աշխատանքի նոր ոգտակար ճյուղ:

Տեխնիկական պրոպագանդի հիմնական միջոցները մոտավորապես հետևյալն են.

ա) գրականություն (սկսած տեխնիկական թուղցիկից մինչև տեխնիկական հանրագիտակը).

բ) բանավոր պրոպագանդ (զեկուցումներ, դասախոսություններ, սեմինարներ, կոնֆերանսներ և այլն) և մասսայական կարճատև հեռակա ուսուցում.

գ) ռադիո.

դ) կինեմատոգրաֆիա, ֆոտո, դիսպոզիտիվներ.

յ) ցուցահանդեսներ, թանգարաններ, տեխնիկայի տներ և այլն.

զ) տեխնիկական գրադարաններ, մոդելներ, արտոնագրերի, դիագրամների պահեստարաններ.

է) ամեն տեսակի ուսուցման ոժանդակներ (ձեռնարկներ) (դիագրամներ, մոդելներ, լապտերներ և այլն).

ը) եքսկուրսիաներ.

թ) պրոպագանդի շարժական միջոցներ (ագիտավտոմոբիլներ, շոգենավեր, փողոցային տեղակայանքներ).

ժ) տեխնիկական խաղալիքներ.

Անհրաժեշտ է միքիչ ալելի մանրամասն կանգ առնել տեխնիկական պրոպագանդի այս միջոցների վրա:

Ա. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտասահմանյան փորձն ամենահարուստ նյութն է տալիս յեղրակացություններ անելու համար: Ամերիկան ունի հիանալի հանրամատչելի-տեխնիկական ժուրնալներ, սքանչելի ժուրնալներ ըստ մասնագիտությունների, հիանալի տեղեկատուներ, գրպանի հանրագիտակներ, «հավերժական գրքեր» (վորտեղ փոխարինվում են հնացած մասերը կամ գլուխները): Գերմանիայում ևս ճիշտ այդպես կան մի շարք բացառապես գործարար հրատարակություններ թե ընդհանուր և թե մասնագիտական բնույթի: Անգամ առանձին ֆիրմաներն էլ ունեն իրենց հրատարակությունները, վորոնք կապված են և՛ նոր տեխնիկայի հետ և՛ կադրերի պատրաստման հետ: Ֆրանսիայում հեռակա ուսուցումը գրված է այնպես, վոր ճարտարագետների մեծամասնությունը իր կրթությունն ստանում է հենց այդ կարգով և այլն:

Մեր ժուրնալները հաճախ կրկնում են հին մտքերը: Շատ ջրիկ են: Շատ շարժուն են: Աշխատում են դանդաղ: Քիչ են ուշադրություն դարձնում արտադրանքի վորակին: Գրականությունը մասսաների համար կազմվում է քիչ ձեռնհաս հեղինակների կողմից: Այստեղ հարկավոր է ներգրավել մեր (և արտասահմանյան) լավագույն ուժերը և գնալ առաջնակարգ տեխնիկական գրականություն արտադրելու գծով, ըստ վորում պետք է դադարեցնել «մեթոդոլոգիայի» հսկայական ուռեցումը, մոցնելով այն գործարար (վոչ գործավոչ!) շրջանակների մեջ և դնելով այդ բոլորը լուրջ հիմքերի վրա:

Մեզ համար առանձնապես անհրաժեշտ զանազան տեսակի գրականությունից հարկավոր է մատնանշել հետևյալ կատեգորիաները.

ա) տեխնիկական պրոկլամացիա, կապված մեր արդյունաբերություն հատկապես այս կամ այն թերությունների հետ, վորը պետք է կազմվի գործին լիովին տիրապետելու պայմաններում.

բ) բրոշյուրներ և գրքերի հանրամատչելի սերիա ընդհանուր տեխնիկական հարցերի վերաբերյալ.

դ) հանրամատչելի սերիաներ՝ առանձնապես այժմեական տեխնիկական հարցերի վերաբերյալ (նորոգիծներ, առանձնապես հետաքրքիր գյուտեր)։

դ) հանրամատչելի սերիաներ՝ առանձին մեքենաների, ապարատների, տեխնոլոգիական պրոցեսների, հուսման վերաբերյալ և այլն։

յե) հանրամատչելի սերիաներ ըստ արտադրության առանձին տեսակների։

զ) տեղեկատուներ վորակյալ բանվորների համար։

ե) մտածված ~ կազմված հանրամատչելի դասագրքերի սերիա հեռակա ուսուցման համար։

ը) տեխնիկայի դասագրքեր ընդհանրապես։

թ) մենագրություններ։

ժ) տեղեկատուներ վարպետների և ճարտարագետների համար։

ի) գրպանի հանրագիտակներ ըստ մասնագիտությունների։

լ) տեխնիկական հանրագիտակներ ընդհանրապես։

խ) տեխնիկական ժուրնալներ, հատկապես մասսայական տեխնիկական ժուրնալներ բանվորների համար։

ծ) ժողովածուներ գիտության և տեխնիկայի նորադույն նվաճումների վերաբերյալ։

կ) տեղեկատու բյուրեղներ և բերլիոգրաֆիական ցանկեր։

հ) աշխատանքներ, վորոնք հաշվի չեն առնում նոր շինարարությունների փորձը։

ձ) գրականություն կառավարման տեխնիկայի վերաբերյալ։

ղ) պլակատներ, բացիկներ և այլն։

Հատկապես պետք է մատնանշել միկրոգրքի, «հավերժական գրքի», գրպանի տեղեկատուների և հանրագիտակների կիրառումը։ Վոչ մի դեպքում չի կարելի իջեցնել վորակյալ գրականության թեո-րետիկ փակարդակը։

Կոտեյի հրահանգչական ղեկուցման մեջ, վորը Գերմանիայում այժմ հանդիսանում է ճարտարագետների վերավարակավորման հիմքը, մենք կարող ենք հետևյալը։—«Այն բանից, թե արդյունաբերությունը ներկայումս և ապագայում կունենա արդյոք ճարտարագետներ, վորոնք չնայած առորյա աշխատանքի դաժան պահանջներին, լրջորեն կհոգան, վորպեսզի գնան համաքաղ գիտության և տեխնիկայի ապագա պրոգրեսի հետ, վորպեսզի իրապես մնան իրենց մասնագիտության վարպետ,— դրանից է, կրկնում ենք, առաջին հերթին կախված այն, թե կդիմա-նանք մենք արդյոք ուրիշ յերկրներին հետ ունեցած մրցակցական պայ-քարում» («Գերմանական ինժեներների ընկերության որագիր», Հ. 75, № 26—27, հունիս 1931 թ., գերմաներեն)։ Ավելի ևս մեծ չափով այս վերաբերում է ԽՍՀՄ-ին. մասսաների արագ վորակավորումը և գիտության ու տեխնիկայի վերջին խոսքերի արագ

թափանցումն արտադրության մեջ — դա յե պայմանը մեր հետագա վերելքի։

Բ. ԲԱՆԱՎՈՐ ՊԵՐՊԱՐԱՆԻ

Բանավոր պրոպագանդը, ինչպես և գրականը, պետք է հարմարվի լսարանին և փոփոխվի սրա կազմին համեմատ։ Բանավոր պրոպագանդի ձևերից մենք մատնանշում ենք հետևյալները։

ա) առանձին ղեկուցումներ։

բ) ղեկուցումների, դասախոսությունների, դրույցների, կոնսուլտացիաների սերիաներ։

գ) դիսկուսիոն յերեկոներ տեխնիկական հարցերի վերաբերյալ։

դ) սեմինարներ և դասընթացներ։

յե) կոնֆերանսներ։

զ) յելույթներ արտադրական խորհրդակցություններում։

ե) տեխնիկական փորձի փոխանակման յերեկոներ։

ը) վորակյալ գիտական և գիտական-տեխնիկական ղեկուցումներ ու համապատասխան դիսկուսիաներ։

թ) բացատրական ղեկուցումներ եքսկուրսիաների, թանգարանների այցելության ժամանակ և այլն։

ժ) հեռակա բանավոր ուսուցում՝ ռադիոյի, կինեմատոգրաֆի ոգ-նությամբ և այլն։

ի) տեխնիկական համագումարներ։

լ) գիտնականների, տեխնիկների, բանվորների զոդման յերեկոներ։

Գ. ԿԵՆՈՑԵՎՈՍԻԱՆ

Այստեղ հարկավոր է ռադիոյի և կինոյի ամենալայն կիրարկումը, հատկապես յեթե նկատի առնենք, վոր անհրաժեշտ է 1) ժողովրդա-կանացնել առարկայական ձևով ա մենավերջին գիտական-տեխ-նիկական նվաճումները, 2) ժողովրդականացնել դրանք ա մենալայն կերպով՝ նկատի ունենալով արտասահմանյան եքսկուրսիաների և ԽՍՀՄ հսկայական տերիտորիան շրջելու տեխնիկական դժվարու-թյունները։

1) Գիտությունը, 2) տեխնիկան, 3) աշխատանքի կազմակեր-պումը, 4) ծանոթացումը Միության զանազան մասերում գոյություն ունեցող աշխատանքի պայմաններին, 5) ծանոթացումը Միության բնական հարստություններին և այլն,— սրանք բոլորը հզորագույն ոժանդակություն պիտի գտնեն փորձի հաղորդման և նրա հանրա-յնացման այդ նորագույն միջոցների ոգնությամբ։ Գործի այս կողմի վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել և վճռականապես տի-րապետել այդ լծակներին տեխնիկական պրոպագանդի նպատակների համար։

Մեր ծայրահեղ հետաքննություններն արտահայտվում են համապատասխան հիմնարկների համարյա կատարյալ բացակայությամբ: Մինչդեռ շինարարության տարածմանը զուգընթաց, այսպես կոչված «պերիֆերիայում», անհրաժեշտ է ունենալ ցուցահանդեսների և թանգարանների ավելի մեծ ու հզոր ցանց: Ինչ վերաբերում է վերջիններին, վորպես կենտրոնական տեխնիկական թանգարանի նմուշ, համապատասխան ուղղումներով, անհրաժեշտ է վերցնել Մյունխենի տեխնիկական «Գերմանական թանգարանը», վորն ավելի բարձր է կանգնած մինչև իսկ Լոնդոնի թանգարանից (կենսիկատոնում): Նրա սկզբունքն է. 1) տեխնիկայի պատմական զարգացումը, 2) տեխնիկայի ցուցադրում «բանելու միջոցին» (այցելուներն իրենք կարող են շարժման մեջ դնել ուղած մեքենան): Մեր «ուղղումները» հետապնդում են վորպես նպատակ պլանային սոցիալիստական տնտեսությունը, տեխնոլոգիական պրոցեսներն ավելի մեծ կապվածություն իրենց հասարակական մասշտաբով, տեխնիկայի միացումը կյանքի մյուս կողմերի հետ (եկոնոմիկա, դասակարգեր):

Ցուցահանդեսները պետք է լինեն ամենաբազմազան տեսակի. նրանք պետք է լինեն և՛ վաղանցուկ նպատակներ հետապնդող (որինակ՝ պայքարը ճեղքվածքների դեմ, պայքարը բրակի բարձրացման դեմ), և՛ ավելի կայուն բնույթի, և՛ ընդհանուր բնույթի, և՛ ըստ արտադրությունների:

ՅՆ. ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՐԱԳԱՐԱՆՆԵՐ ՅԵՎ. ԱՅԼ ՊԱՆՏՍԱՐԱՆՆԵՐ

Մեզ անհրաժեշտ է ամեն կերպ զարգացնել ցանցն իր հետևյալ բաղկացուցիչ մասերով.

ա) տեխնիկական գրադարաններ բոլոր հիմնական հրատարակություններով և պարբերականով. բ) գծագրերի, դիագրամների, մոդելների հավաքածուներ. արտոնագրերի կոլեկցիաներ և համապատասխան գրադարաններ (ինչպես Լոնդոնի գրադարանը «Պետրոսովսկի»-ին կից). գ) մասսայական աշխատանքի կետեր գրադարանների շուրջը:

Զ. ՈՒՍՈՒՅՄԱՆ ՅԵՎ. ՈՒՍՆԻՅԱ ՍԱՐԲԵՐ, ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԴՈՒԳՐԱՄՆԵՐ ՅԵՎ, ԱՅԼ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐ

Ձեռնհաս մարդկանց կողմից մտածված, կազմված համապատասխան ոժանդակների սխառմը բացառիկ խոշոր դեր է խաղում: Այս ասպարեզում մեզ անհրաժեշտ է ամբողջովին ոգտագործել գերմանական «Դոյչ» կազմակերպության («Տեխնիկական դպրոցի գերմանական կոմիտե») փորձը, վորն իր հերթին ունի հատուկ կազմակերպություն՝ «Ցերմիտելինստ» («Սպասարկում ուսուցման ոժանդակների գծով»): Սրան վերաբերողները հետևյալն են.

1) լուսավոր նկարներ և լադերներ. 2) հատուկ հարմարանքներ կինոյի համար և այլն. 3) դիագրամներ. 4) աղյուսակներ ամեն տեսակի. 5) մոդելներ. 6) առարկայական ոժանդակներ, վորոնց ոգնություն կարելի չէ կատարել մի շարք փորձեր մոդելների վրա. 7) պրոցեսների համեմատական աղյուսակներ, վորոնց միջոցով կարելի չէ հայտարարել տիպային սխառները (աղյուսակներ՝ «Ճիշտ է—Սխալ է» կամ «Լավ է—Վատ է» վերնագրով). 8) ոժանդակներ տեխնիկայի վերաբերյալ ընդհանրապես. 9) ըստ արտադրությունների. 10) դասավանդման պլաններ. 11) կալիուլյացիա. 12) հաշվային գործիքներ, արիֆմետիկներ և մեքենայական մի շարք հարմարանքներ, վորոնք կրճատում են հաշվարկները. 13) ստանդարտներ, նորմաներ և այլն: «Դոյչ»-ը, «Ցերմիտելինստ»-ը հետևյալ ձևով է ստորաբաժանում իր հարմարանքները.

1) պրոֆեսիոնալ ուսուցում (գծագրեր, աղյուսակներ, մոդելներ ըստ արտադրությունների՝ սկսած ուսուցման ամենաակզրնական շրջանից. 2) կիսավորակայների ուսուցում. 3) աղյուսակներ և տեղեկատուներ «Ճիշտ է—Սխալ է» աղյուսակի տիպի (նրանց մեջ ճշտի և անսխալի կողքին գծագրերով, նկարներով և հաշվարկներով բերվում են տիպիկ սխառներ, տեխնոլոգիական սխալ յեղանակները). 4) տեղեկատուներ, աղյուսակներ, գրքեր ըստ մասնագիտությունների. 5) ոժանդակներ տեխնիկական դպրոցի համար (ներառյալ կախարդական լադերները, կինոն, մոդելները և այլն):

Մեզ անհրաժեշտ է, ոգտագործելով այդ փորձը, նշանակալի չափով այն ընդարձակել նոր խնդիրների կապակցությամբ: Այստեղ պետք է նկատի ունենալ, վոր արտասահմանում գոյություն ունեն մի շարք դյուսեր, վորոնք չեն կիրառվում ճգնաժամի հետևանքով (բացարձակ մաքուր գրամոֆոն, նրա միացումը փունտովոր եկրանին և այլն):

Ե. ԵՐՍԿՈՒՐՈՒՆՆԵՐ

Տեխնիկական փորձի լայն փոխանակման նպատակի համար անհրաժեշտ են.

1) մասնագիտական եքսկուրսիա ԽՍՀՄ սահմաններում (ծանոթացում նոր կառուցումներին, որինակելի գործարաններին, գիտական հետազոտական ինստիտուտներին).

2) եքսկուրսիաներ դեպի արտասահման ա) առանձնապես աչքի ընկած բանվորների, բ) տեխնիկների, գ) ճարտարագետների, դ) գիտական-հետազոտական աշխատավորների համար:

Ը. ՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՂԱԼԻՔ

Անհրաժեշտ է ոգտագործել ու կատարելագործել «Մեկկանո» կազմակերպության փորձը, վորի գործունեությունն ստացել է բա-

ցառիկ հսկայական թափ (կազմակերպություն բոլոր խոշորագույն յերկրներում, մասնագիտական ժուրնալ և այլն և այլն):

3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԵՄԻՆԵՐԵՐ

Հաջող տեխնիկական պրոպագանդի նախադրյալն է հանդիսանում, ի միջի այլոց, մի կողմից—տեխնիկական և գիտական լայն հասարակայնություն ստեղծումն սկսած գործարանից մինչև բարձրագույն տեխնիկական դպրոցն ու ակադեմիաները և մյուս կողմից—աշխատանքի, գյուտերի և այլ գործերի վարձատրության ճիշտ սխեման: Վերջին կողմը բացառիկ մեծ դեր է խաղում և միայն այս խնդրին լուծում տալու դեպքում կարելի չէ ստանալ բովանդակ տեխնիկական պրոպագանդի իրապես բարձր ուղտակար գործողություն զործակից: Սակայն այս հարցը դուրս է գալիս սույն զեկուցագրի իրավասության սահմաններից:

Ինչ վերաբերում է լայն տեխնիկական հասարակայնություն ստեղծելուն, անհրաժեշտ է այստեղ բերել որինակ գերմանական պրակտիկայից: Սիմենս ֆիրման տեխնիկական պրոպագանդի և կադրերի պատրաստման վերաբերյալ մեր հարցումին պատասխանել է (մի շարք այլ ֆիրմաների նման) մի ամբողջ զեկուցագրով, վորից յերևում է, վոր նրա ծառայողները հաճախում լսում են զեկուցումներ, մասնակցում են վիճաբանություններին և այլ հավաքույթների կազմակերպված անթիվ անհամար ընկերությունների կողմից (Բուսնեի ինստիտուտը Բերլինում, համալսարան, Բարձրագույն առևտրական դպրոց, Հոլմբուրգի անվան Բարձրագույն դպրոց, Լեսսինգի անվան բարձրագույն դպրոց, Գերմանական ճարտարագետների միության Բերլինի կազմակերպություն, Ելեկտրոտեխնիկական ֆերայն, Գերմանական արտադրող ճարտարագետների միություն, ճարտարապետների և ճարտարագետների ֆերայն, Գերմանական քիմիկոսների շրջանային ֆերայն ու դեռևս ավելի քան 30 զանազան ընկերություններ ու կազմակերպություններ!): Իսկ ՀՍ Միացյալ Նահանգներում գոյություն ունի ամերիկյան համալսարանների հզոր ասոցիացիա՝ տեխնիկական գիտելիքներ տարածելու համար: Մենք, վոր հնարավորություն ունենք պլանաչափ ազդեցություն գործելու տեխնիկայի և տնտեսության վրա, կկարողանայինք ստանալ իրոք վիթխարի արդյունքներ, յեթե պատշաճ աստիճանի բարձրացնեյինք մեր տեխնիկական հասարակայնությունը:

Սրա համար անհրաժեշտ է.— ա) ստեղծել բանվորական տեխնիկական ակտիվ. ստեղծել այդ ցածից՝ վորպես հիմք ընդունելով գյուտարարների, տեխնիկան սիրողների, տեխնիկական

թղթակիցների խմբակները և այլն. բ) այդ բանում ապահովել առավել աչքի ընկնողների ընտրությունը, խուսափելով բյուրոկրատական ծայրահեղ կենտրոնացված կազմակերպությունների ձևերից. գ) վրձնականապես վերակառուցել այնպիսի ընկերությունները, ինչպիսին է «Տեխնիկական մասսաներին», հիմք ընդունելով ստորին ողակները, հրաժարվելով անկենդան բյուրոկրատական ձևից, դ) վերափոխել գիտական-տեխնիկական ընկերություններն ու դարձնել տեխնիկների և ճարտարագետների ինքնագործունյա ընկերություններ՝ նրանց վորակավորման բարձրացման համար (այստեղ խնդիրը պետք է լինի—գիտություն և տեխնիկայի զարգացումը, գիտական-տեխնիկական աշխույժ գիտկուսիաները, նոր պրոբլեմների դրումը, ինժեներա-տեխնիկական փորձի փոխանակումը, արտասահմանյան գիտական-տեխնիկական մտքի ոգտագործումը և այլն). յե) ամեն կերպ խրախուսել խմբակների զարգացմանը գործարաններում և այլն, խմբավորելով ամբողջ այդ շարժումը տեխնիկական և արդյուն և տեխնիկական ժուրնալներին շուրջը:

Ներկայումս տեխնիկական պրոպագանդով զբաղվում են (կամ պետք է վորպես պարտականություն զբաղվեն) հետևյալ կազմակերպությունները.

1. Կուսակցությունը: 2. Կոմյերիտությունը և պատկոմները: 3. ՀՍՄԿԽ-ը և նրա որդանները (հսկայական միջոցներ). 4. Բուհերը: 5. «Տեխնիկական մասսաներին» ընկերությունը: 6. Գիտական-տեխնիկական ընկերությունները և ՀՏՄ-ն (ճարտարագետներ, տեխնիկներ, բանվորներ արհմիություններին կից և գործարաններում): 7. ՊԱՀԸ-Ավիաքիմը: 8. Քիմիացման կոմիտեն: 9. ВАРНИТСО-ն: 10. Գիտական-հետազոտական ինստիտուտները: 11. Ստորին բլիշները գործարաններում և այլն:

Անհրաժեշտ է ամեն միջոցով խրախուսել բոլոր այս կազմակերպությունները, աշխատելով ամեն կերպ խուսափել բյուրոկրատական խնամակալությունից, հենվելով նրանց վրա, ողնելով նրանց, զարգացնելով հասարակական-տեխնիկական ինքնագործունեությունը և պատրաստելով՝ աշխատավորների լայն մասսաների վրա ավելի ու ավելի հզոր ներգործություն անելու հիմնական նյութական լծակները:

Բ. ԳՈՐԾԱՐԱՆ

Գործարանը պետք է լինի ներգործության հիմնական առարկան: Այստեղ մենք կմտնանք, վորպես լուսաբանություն, մոմենտներ, վորոնք վորոշում են գործարանում մղվելիք տեխնիկական պրոպագանդի աշխատանքը.

1) տեխնիկական խմբակներ համապատասխան գործարանային արտադրությանը. «տեխնիկայի տիրապետման խմբակներ».

2) «նեղ տեղերի» հաղթահարման, «ճեղքվածքների» դեմ պայքարելու տեխնիկական խմբակներ և այլն.

3) կանոնավոր դասախոսություններ հիմնական տեխնոլոգիական պրոցեսների վերաբերյալ.

4) արտադրական խորհրդակցությունների սպասարկում (նորություններ, բանվորական առաջարկների տեխնիկական ձևակերպում և այլն).

5) տեխնիկական գրականության պրոպագանդ և նրա վաճառման նոր ձևեր (դիմադրկություն դեմ).

6) տեխնիկական թուղթիկ.

7) բանվոր և յերիտասարդ ճարտարագետ ~ հեղինակների խումբ.

8) արտադրական կինո. ուրիշ գործարանների փորձը. արտասահմանյան փորձը.

9) տեխնիկական փորձի փոխանակման յերեկոներ (նաև ցեխերի միջև).

10) թանգարանների և ցուցահանդեսների կանոնավոր հաճախում.

11) գրադարանների տեխնիկական մաս (մեծ գործարաններին կից—մասնագիտական տեխնիկական գրադարաններ).

12) հեռակա ուսուցում իր բոլոր տեսակներով.

13) գործարանային լաբորատորիա վորպես զիտական-տեխնիկական ոջախ.

14) կապ գիտական-հետազոտական ինստիտուտների հետ.

15) տեղական տեխնիկական ցուցահանդեսներ.

16) տեխնիկական յերես տեղական թերթում.

17) տեխնիկական նորությունների տախտակ, տեխնիկական աննոտացիա.

18) տեխնիկական ժուրնալ և նրա տարածումը ձեռնարկություն մեջ:

19) Տեխնիկական մրցականչեր և կոնֆերանսներ ուրիշ գործարաններ հետ.

Գ. ԺՏԳԽ-Ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ ՍԵՎՏՈՐ

ԺՏԳԽ-ի տեխնիկական պրոպագանդի սեկտորը,—հենվելով հասարակական կազմակերպությունների ամբողջության, խմբակների և այլ միությունների վրա ու, լինելով սերտ կապված ԺՏԳԽ-ի կադրերի սեկտորի, բոսոհերի և բոսհերի հետ,— իր ձեռքում պետք է ունենա, ուղղակի և անմիջականորեն, ներգործության հետևյալ լծակները:

1) Արտադրական-տեխնիկական կինոն: 2) Արտադրական-տեխնիկական ռադիոն: 3) Տեխնիկական հրատարակչությունը (բոստ վո-

րում նա պետք է ապակենտրոնացվի և մասնագիտական ժուրնալները և այլն հանձնվեն միավորներին ու ինստիտուտներին): 4) Տեխնիկական պրոպագանդի ոժանդակների ձեռնարկների, արտադրություն և բաշխման կենտրոնը: 5) Թանգարանը և ցուցահանդեսները: 6) Տեխնիկական ինֆորմացիայի կենտրոնը: 7) Տեխպրոպագանդի հրատապ հարցերի վերաբերյալ տեխնիկական լրագիրը և ժուրնալը:

Սեկտորի ապարատը՝ ցածից.

1. Գործարանում—արտադրական խորհրդակցությունների գծով զիրեկտորի ոգնականը, վորը վորպես իր հիմնական գործը պետք է կատարի տեխնիկական պրոպագանդի աշխատանքը: 2. Միավորումներում—տեխպրոպագանդի խմբերը: 3. Տեխպրոպագանդի հենակետերը ինստիտուտներում և բոսոհերում: ԺՏԳԽ-ի նախադահությունն առնալ թեր անմիջականորեն սեկտորի ապարատը:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԴՐՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ*)

ՀԱՄ. Կ. (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1931 թ. ՄԱՅԻՍԻ 25-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հաստատել, վոր արտադրական-տեխնիկական պրոպագանդի գրվածքը և, մասնավորապես, տեխնիկական գիտելիքների վերաբերյալ գրականություն հրատարակումը չափազանց հետ են մնացել յերկրի ինդուստրացման և արդյունաբերություն տեխնիկական վերակառուցման ընդհանուր թափից:

2. Առաջարկել ԽՍՀՄ ԺՏԳԽ նախագահությանը, վորպեսդի նա Կենտկոմի կուլտպրոպի և Միացյալ Պետհրատի հետ միասին մշակի արտադրական-տեխնիկական պրոպագանդի ծավալման պլանը, հատկապես տեխնիկական գրականություն—ինչպես հիմնական տեխգրականություն, տեխնիկական դասագրքերի և տեղեկատուների, այնպես և հանրամատչելի-մասսայական տեխգրականություն—հրատարակման պլանը:

3. Արտադրական-տեխնիկական պրոպագանդի—ինչպես բանավոր (դասախոսություններ), նույնպես և գրական—հաջող ծավալման համար կազմակերպել ԺՏԳԽ-ին կից արտադրական-տեխնիկական պրոպագանդի բաժին գլխավորությունը ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի նախագահության անդամի:

4. Տեխնիկական գրականություն հրատարակչական պլանում ապահովել դասագրքերի և խորհրդային պրոֆեսորների ու ճարտարագետների աշխատասիրությունների, ինչպես և ոտարերկրյա թարգմանական տեխգրականություն հրատարակությունը բուհերի, արդյունաբերություն ինժեներա-տեխնիկական ու ղեկավար կադրերի համար, ըստ վորում հրատարակչական պլանում հատուկ ուշադրություն պետք և նվիրվի հայերենի և ոտարերկրյա նորագույն տեխգրականություն հրատարակմանը:

5. Ընդհանուր տեխնիկական գրականություն հետ զուգընթաց լայն կերպով հրատարակել գրականություն ըստ արդյունաբերություն առանձին ճյուղերի, առաջին հերթին ըստ այն ճյուղերի, վորոնք Խորհրդային Միության մեջ նոր են և վորոնց բավականաչափ ծանոթ

չեն ինժեներա-տեխնիկական և ղեկավար արդյունաբերական կադրերն ու վորակյալ բանվորները:

6. Անհապաղ անցնել լուրջ գիտական-տեխնիկական ժուրնալի հրատարակմանը, վորտեղ պետք և լուսաբանվեն տեխնիկայի բոլոր նոր նվաճումներն ինչպես ոտարերկրյա պետություններում, նույնպես և ԽՍՀՄ-ում: Այդ ժուրնալում պետք և դրվի, մասամբ արտատպվելով, մասամբ ինֆորմացիա տալով, տեխնիկայի նորագույն նվաճումների լուսաբանություն ըստ արտասահմանյան տեխնիկական գրականության աղբյուրների:

7. Բացի ժուրնալից և գիտություն ու տեխնիկայի արտասահմանյան ականավոր գործիչների առանձին մասնագիտական աշխատությունները, վորոնք հրատարակվելու յին գլխավորապես արդյունաբերության բարձրագույն հրամկազմի համար, անհրաժեշտ և ապահովել առավել հանրամատչելի գիտական-տեխնիկական գրականություն հրապարակում արդյունաբերություն միջին հրամկազմի համար,—նախ և առաջ հարկավոր և ապահովել տեխնիկական հանրագիտակի և մասնագիտական տեղեկատուների հրատարակում ըստ արդյունաբերություն առանձին ճյուղերի:

8. Միաժամանակ, բանվորների և ծառայողների տեխնիկական մակարդակի ու վորակավորման բարձրացման նպատակով պետք և ապահովվի եժանագին մասսայական-հանրամատչելի տեխնիկական գրականություն և տեխնիկայի հանրամատչելի դասագրքերի հրատարակումը միլիոնավոր տիրաժներով՝ ինչպես տեխնիկայի ընդհանուր հիմունքների դեմ, նույնպես և ըստ արդյունաբերություն առանձին ճյուղերի:

Մասնավորապես՝

ա) գտնել անհրաժեշտ եժանագին հանրամատչելի գրականություն հրատարակումը, վորը նկարագրելու յե տեխնիկական կողմից՝ նոր կարևորագույն շինարարությունները (Մագնիտոստրոյ, Բերեզնյակի, Կուզբաս, Կալինովային արտադրություն, Ջելյաբորակոտորստրոյ, Գորկու քաղաքի ավտոստրոյ, Սելմաշ և այլն)։

բ) անցնել եժան հանրամատչելի բրոշյուրների, թերթիկների, պլակատների, բացիկների մասնագիտական սերիայի հրատարակմանը, վորոնք նվիրված պետք և լինեն ներկայումս մեր գործարաններում և նոր արդյունաբերական կառուցումների մեջ կիրառվող նոր տեխնիկայի նկարագրությունը (դազգյահներ, արտափորիչ մեքենաներ, վերահան մեքենաներ, հորատիչ մուրճեր, ավտոգեն զոդում, պնեմատիկ գամում և այլն)։

գ) ծավալել մասնագիտական գրականություն հրատարակումը, վորը պետք և նկարագրի մասսայական գյուտարարություն առավել աչքի ընկնող նմուշները և իրենց՝ գյուտարարներին։

դ) Հրատարակել հատուկ ժողովածու ԽՍՀՄ և արտասահմանի տեխնիկայի ու գիտություն հռչակավոր գործիչների բնութագրերով:

9. Նկատի առնելով, վոր տեխնիկական գրականություն հրատարակման գործի մեջ ավելի քիչ են, քան վորևե ալ ասպարեզում, ներգրավված նոր յերիտասարդ հեղինակներ, պարտավորեցնել Միացյալ Պետհրատին՝ հրատարակչական պլանի կատարման համար ներգրավել Խորհրդային Միության նոր յերիտասարդ ականավոր տեխնիկական ուժերին, հավասարապես նաև ոտարերկրյա հռչակավոր մասնագետներին:

10. տեխնիկական գրականության հրատարակման պլանը մշակելիս նկատի ունենալ, վոր տեխգրականության համար թուղթ անհրաժեշտ և տրամադրել Միացյալ Պետհրատի կողմից ստացվող ամբողջ գումարի մոտավորապես 20-ից մինչև 25 տոկոսն, այժմ տրամադրվող 10,9 տոկոսի փոխարեն:

11. պատշաճ բարձրության վրա դնել տեխնիկական գրականության տարածումն ինչպես բաժանորդագրությամբ, նույնպես և «Կնի-գոցենտր»-ի խանութներում վաճառելով: մասնավորապես հանձնարարել Կենտկոմի Կուլտպրոպին և Լուսժողկոմատին, վորպեսզի նրանք մշակեն՝ ամբողջ գրադարանային ցանցին, առաջին հերթին գործարանային գրադարաններին, տեխնիկական գրականություն մատակարարելու պլանը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՅԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ*)

ՀԱՍ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1931. Թ. ՈԳՈՍՏՈՍԻ 5-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Յեննելով Համկոմկոսի (բ) Կենտկոմի տեխպրոպագանդի վերաբերյալ դերեկտիվից, հավանություն տալ այն դրույթներին, վորոնք բացատրված են ընկ. Բուխարինի՝ տեխնիկական պրոպագանդի և նրա կազմակերպման մասին ներկայացրած զեկուցագրում:

2. Նկատի առնելով տեխնիկական և գիտական գրականության հրատարակման գործի անբավարար դրությունը, այդ աշխատանքի մեջ ներգրավված արդյունաբերական կազմերի անբավարարությունը և գիտական-տեխնիկական հրատարակչությունների թույլ անմիջական կապն արդյունաբերության որդանների հետ,—գտնել անհրաժեշտ Միացյալ Պետհրատի կազմից առանձնացնել Պետական գիտական-տեխնիկական հրատարակչություն և այն կազմակերպել ԽՍՀՄ ԺՏԳԽ-ին կից:

Առաջարկել Միացյալ Պետհրատին, վորպեսզի նա առանձնացնի թղթի պաշարների և պոլիգրաֆիական միջոցների վոչ պակաս քան մի չորրորդ մասը ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի տվյալ հրատարակչության համար:

Առաջարկել ԽՍՀՄ ԺՏԳԽ-ին՝ ամենակարճ ժամանակում լուծել գիտական-տեխնիկական հրատարակչության ապաքատի կառուցվածքի հարցը՝ միավորումների ապախոշորացման առնչությամբ:

3. Առաջարկել ԺՏԳԽ-ին՝ ապահովել տեխնիկական պրոպագանդի սպասարկումը կինոյի միջոցով:

4. Առաջարկել Փոստ-հեռապրական ժողկոմատի ոտդիովարչությունն՝ ամբողջապես ու լիովին ապահովել ինչպես եպիզոդիկ, նույնպես և սխտեմատիկ տեխպրոպագանդի կանոնավոր կիրարկումը ոտդիով:

5. Առաջարկել ԽՍՀՄ ԺՏԳԽ-ին՝ կազմակերպել մասսայական տեխնիկական ուսուցման և պրոպագանդի համար առարկայական ուժանդակների հատուկ միավորում:

*) „Правда“ 8 августа 1931 г.

6. Համարել անհրաժեշտ Կենտրոնական Տեխնիկական Թանգարանի ստեղծումը:

Առաջարկել ԽՍՀՄ ԺՏԳԽ-ին՝ այդ հարցը մշակել ու անցնել ԿՏԹ-ի կառուցմանը 1932 թվին:

7. Ընդունել՝ Մոսկվայում մշտական տեխնիկական ցուցահանդես կազմակերպելու առաջարկը, ցուցահանդես, վորը պետք է արտացոլի յերկրի սոցիալիստական վերակառուցումը: Վերջացնել այդ աշխատանքը Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարեդարձին:

8. Նպատակ ունենալով մասսայական տեխնիկական պրոպագանդի դեկավարության կազմակերպումը, յերկրի սոցիալիստական վերակառուցման տեխնիկական պլանների ժողովրդականացումը, համաշխարհային տեխնիկայի ու տեխնոլոգիաների նորագույն նվաճումների արմատացումը, նաև տեխնիկական հասարակայնության մոբիլիզացիան, — անհրաժեշտ համարել հատուկ տեխնիկական լրագրի ստեղծումը ԽՍՀՄ ԺՏԳԽ-ին կից: Այս հարցի վերաբերյալ հանձնարարել ընկ. Բուխարինին և ընկ. Բոգուշևիկուն, վորպեսզի նրանք համաձայնեցված առաջարկ մտցնեն Կենտկոմ:

9. Հաստատել Կենտկոմի վորոշումը դեկավար գիտական-տեխնիկական ժուրնալ կազմակերպելու մասին, արագացնելով այդ վորոշման իրացումը:

10. Տեխնիկական պրոպագանդի դեկավարությունը ձեռնարկություններում հանձնել արտադրական խորհրդակցությունների գծով գործարանների դիրեկտորների ոգնականներին, թեթևացնելով նրանց ըլրոր այն հարցերից, վորոնք կապված են արտադրական խորհրդակցությունների և տեխպրոպագանդի աշխատանքի հետ:

11. Առաջարկել ԽՍՀՄ Ժողկոմխորհին՝ մասսայական տեխնիկական պրոպագանդի ծավալման բազա ստեղծելու համար հատուկ վորոշումով ապահովել տեխպրոպագանդի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցները, այդ միջոցները կենտրոնացնել ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի տեխպրոպագանդի սեկտորին կից:

12. Հանձնարարել Կենտկոմի քարտուղարությանը, վորպեսզի նա ԺՏԳԽ-ի տեխնիկական պրոպագանդի սեկտորի համար աշխատավորների թեկնածություններ առաջադրի:

Թարգմ. Հով. Տեր-Հովհաննիսյան.

Խմբ. Գ. Հակոբյան

Սրբազրիչ Լ. Արսվյան

Հանձնված է արտադրության 17 հուլիսի 1933 թ.

Ստորագրված է տպագրելու 22 հուլիսի 1933 թ.

Գլավլիտ № 7701 (բ) Հրատ. № 68, Տիրած 3000,

Պուստիսի տպարան, Պատվեր № 12, 140,000 տպ. ցո.

ՀՀ Ազգային գրադարան



NL0289367

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

9159

~~4823~~



Գ.Ս.Բ. և Լուր

1938 թ.

Н. И. Бухарин

О ТЕХНИЧЕСКОЙ ПРОПАГАНДЕ

и ее

О Р Г А Н И З А Ц И И

Партиздат 1933 Эривань

62

Р - 95